Որտե՞ղ են սոցիալական ծառայությունները, ոստիկանությունը: Այս հարցերը պետք է տալ, բայց միեւնույն ժամանակ, իմ կարծիքով, այս պատմության ամենամեծ մեղավորները հարեւաններն են: Նրանք վստահաբար գիտեն՝ ով ով է: Եթե Երեւանի բազմաբնակարան շենքում շատերն իրար չեն էլ ճանաչում, ապա գյուղերում դա բացառված բան է:

Կարդացեք՝ էջ 4

Մոլդովայում գործում է 2 ուղղափառ եկեղեցի՝ «ռուսապատկան» եւ «ռումինապատկան»: Առաջինն ունի մոտ 1200, երկրորդը՝ 180 եկեղեցի: ՄՔՄ-ն կրում է «անտառային ուղղափառության» հիշողությունը՝ գեղջկական պատումներով, խորհրդային մղձավանջը քրիստոնեաբար հաղթահարելու ջանքով: ԲՄ-ն հատկանշվում է իր «էլիտար» արմատներով:

Կարդացեք՝ էջ 6

Ալիեւը միշտ զինելու է իր բանակը գերժամանակակից զինատեսակներով, իսկ Հայաստանը բանակի ծառայության ժամկետն ու բյուջեն է կրճատում: Կոչ եմ անում՝ քիչ զբաղվել «տերտեր շոուներով». հոգեւոր դասի վեթինգը 2018-ին պետք է լիներ, այլ՝ ոչ հիմա, ողջ բարեփոխումներն արդեն արված պետք է լինեին, 7 տարի ոչինչ չարվեց:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 176 (4078), 6 նոյեմբեր, հինգշաբթի, 2025

Հրապարակ

www.hraparak.am



Իշխանական պատգամավորներն այնքան թքած ունեն օրենսդիր աշխատանքի վրա, որ դարձել են կառավարության նախագծերը տապալողներ: Երեկ ԱԺ պետահիրավական հարցերի հանձնաժողովի նիստում արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի ներկայացրած նախագիծը բացասական եզրակացություն ստացավ միայն այն պատճառով, որ հանձնաժողովի ՔՊ-ական մեծամասնությունից ընդամենը 3 պատգամավոր էր նիստին ներկա՝ նախագահ Վլադիմիր Վարդանյանը, Ալխաս Ղազարյանը եւ Կարեն Սարուխանյանը, իսկ նախագծին առնվազն 4 կողմ էր հարկավոր: Քվեարկությունից հետո միայն, երբ Վլադիմիր Վարդանյանը զարմանք հայտնեց, թե ինչու չեն ներկայացել, քանի որ բոլորը պատշաճ ծանուցվել են նիստի մասին, շնչակտուր քննասենյակ մտավ Տրդատ Սարգսյանը, բայց, ինչպես ասում են, գնացքը գնացել էր, եւ ՔՊ-ն իր ձեռքով տապալեց կառավարության բերած նախագիծը, որն էլեկտրոնային ծանուցումների մասին էր: Հիշեցնենք. ներդրվում է էլեկտրոնային ծանուցումների ամբողջական մեխանիզմ, որպեսզի 2026 թվականի սկզբից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց այդ համակարգով ծանուցեն:

Երեւանի քաղաքապետարանում հերթական նշանակումն է արվել՝ «փոխատեղության» սկզբունքով: Մեր տեղեկություններով, Աջափնյակ վարչական շրջանի եկամուտների բաժնի պետ Վարազդատ Ահարոնյանը նշանակվել է քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վիլեն Արեւշատյանի տեղակալ: Պետը՝ ԺՊ, ինքը՝ ԺՊ: Եվ սա արդեն զարմանալի չէ, քանի որ քաղաքապետարանում վարչությունների ու բաժնի պետերի մեծ մասը ժամանակավոր պաշտոնակատարներ են եւ այդ կարգավիճակում մնում են ամիսներով ու տարիներով: Ի դեպ, մեզ պատմեցին, որ 2018 թվականին Վարազդատ Ահարոնյանի անունը եղել է «Հանրապետություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների համատեղ «Մենք» դաշինքի ռեյտինգային ցուցակում: Երեւանի քաղաքապետարանից հաստատեցին, որ Ահարոնյանը նշանակվել է, հրամանը եղել է նոյեմբերի 3-ին, ասացին՝ մինչ այս նշանակումը զբաղեցրել է Աջափնյակի եկամուտների բաժնի պետի պաշտոնը: Ինչ վերաբերում է կուսակցական լինելուն, ասացին՝ անկուսակցական է:

Անմեղսունակը

Մեզ հաշտեցրին շատ անհաշտելի բաների հետ՝ պաշտոնյաների ցինիզմի, անգրագիտության, ստախոսության: Երբ կարող է աչքերիդ մեջ նայել եւ հանգիստ ստել՝ առանց վախի ու ամոթի: Երբ կարող է մանիպուլացնել, «կրուտիտներ» անել, բռնվել ստի վրա, բայց չխոստովանել: Երբ մարդը չի տիրապետում իր պաշտոնի համար անհրաժեշտ գիտելիքներին ու բավարար գրագետ չէ, բայց մարդկանց ճակատագրեր է վճռում, պետության համար կարեւոր որոշումներ ընդունում: Երեկ լսում եմ Քննչական կոմիտեի նախագահի պատասխանները եւ ապշում: Միշտ էլ իշխանությունը միջամտել է իրավապահների աշխատանքին, եւ քաղաքական հետապնդումներն էլ մեզանում նորություն չեն, բայց այս մակարդակի, նման փաստարկներով: Ուրեմն պարզվում է՝ Սամվել Կարապետյանին կալանավորել են եւ հիմա նոր ապացույցներ են հավաքում: Ենթադրվում է, որ կալանավորելուց առաջ պետք է արդեն ապացույցներ ունենային: Չի կարողանում ոչ մի կերպ բացատրել, թե ինչ հանցակազմ է պարունակում «մեր ձեւով կմասնակցենք» արտահայտությունը՝ խուսանավում է, թե մեղադրական որոշման մեջ գրված է: Դե հո չի՞ ասելու, որ շիզոֆրենիայի նոպայի պահին ինչ-որ մեկի աչքին բաներ են երեւացել, իրենք էլ վազել են՝ նրա հրահանգը կատարելու: Չի կարողանում բացատրել, թե ինչպես է ստացվել, որ Աջապահյանի հարցազրույցում դատախազությունը հանցակազմ չի տեսել, իսկ մեկ տարի անց հանկարծ տեսել է: Պարզ է, որ մեղադրանքների մեծ մասը կառուցված է ենթադրությունների վրա, ասում է. փաստաբան Ռուբեն Մխիթարյանը «տակը» ինչ-որ բան է արել, ապա ձեռքերը բարձրացրել վերեւ: Լրագրողին փորձում է համոզել, որ «ապացույց» հասկացությունից միայն ինքն է գլուխ հանում, ուրիշ ոչ մեկը: Իսկ թե ինչու են այս բոլոր մարդիկ անպայման կալանավորվում, առհասարակ, որեւէ բացատրություն չունի:

Էջմիածնի քաղաքապետի թեկնածու Արգիշտի Մեխակյանին անցկացնելու համար Վաղարշապատում ՔՊ-ն անցել է «մարտեր առանց կանոնների» ձեւաչափին: Քարոզարշավին ներգրավվել են նաեւ դպրոցների տնօրեններ, որոնք ընտրական հանձնաժողովների նախագահներ են: Լուրեր կան, որ նրանք ցուցակագրում, օգնություն են բաժանում բնակիչներին՝ ինչ-որ ՀԿ-ների անունից, հընթացս ուղղորդում իշխանական թեկնածուի կողմը: Մեզ պատմեցին, որ քարոզարշավին ակտիվ ներգրավված են նաեւ Մեխակյանի քրոջ ամուսինը եւ նրա եղբայրը, որոնք Վաղարշապատում հայտնի են իրենց ոչ այնքան ընդունելի վարքով: Նրանք վախեցնում են՝ ով Մեխակյանի հասցեին վատ արտահայտվի կամ չընտրի, լավ չի լինի իր համար:

ՈՉ ՄԻ ՀԱՐՑԻ ՀԻՄՆԱՎՈՐ ՉՊԱՏԱՍԽԱՆԵՑ

Երեկ ԱԺ-ում Քննչական կոմիտեի ղեկավար Արթուր Պողոսյանի հարցուպատասխանն ապացուցեց, որ նա Փաշինյանի քաղաքական հրահանգները կատարողն է, եւ դա է պատճառը, որ չունի հիմնավոր փաստարկներ՝ աղմկահարույց քաղաքական գործերով: Դիցուք, թե ինչու են կիրակի օրը Արագածոտնի թեմի հոգեւորականներին, Հովհաննավանքի պատարագից առաջ, հարցաքննության կանչել ՔԿ, ծիծաղելի պատասխան տվեց, թե քննիչներն են որոշում՝ ում եւ երբ հարցաքննել: Հետո ուղղեց, թե անհետաձգելի քննչական գործողություններ էին: Իսկ թե ինչու հետո չեն կանչել, եւ վարույթ չի հարուցվել, չասաց: Չասաց նաեւ, թե ինչ է տեսել «մեր ձեւով կմասնակցենք» արտահայտության մեջ, որի համար 5 ամիս կալանավորված է Սամվել Կարապետյանը: «Ինչ տեսել ենք կոնկրետ հանցակազմի տիրույթում, արտացոլված է մեղադրանքի փաստական նկարագրության մեջ: Մենք տվեցինք իրավական գնահատական եւ համարեցինք, որ դա, ենթադրաբար, հանցավոր դրսեւորում է: Ավելի մեկնաբանություն չեմ կարող տալ»: Մեր դիտարկմանը, որ հիմա եթե Ձեզնից մենք «մեր ձեւով» հարցազրույց վերցնենք, մեզ ի՞լ կկալանավորեք, ՔԿ ղեկավարն անհոդաբաշխ պատասխան տվեց՝ փորձելով ներկայացնել, թե «ապացույց» բառի իմաստը մենք չենք հասկանում: Քննարկմանը պարզ դարձավ, որ ՔՊ-ականներն էլ դժգոհ են ՔԿ աշխատանքից: «Տնտեսվարողների նկատմամբ հարուցված գործերը հիմնականում վերաբերում են 10 միլիոն դրամից ավելի խախտում արձանագրելուն: Նրանք նշում են, որ հաճախ գումարի չափը միտումնավոր է ուռճացվում, որ գործերը ՊԵԿ-ը փոխանցի ՔԿ, ու գործ հարուցվի»,- ասաց Ծովինար Վարդանյանը: Բաբկեն Թունյանն էլ նկատեց, թե՝ ձեր գործողություններից տպավորություն է ստեղծվում, թե տնտեսվարողների նկատմամբ հետապնդումներով բյուջե լցնելու խնդիր է դրված:

ՔԿ

ՔՅԱՐԱՄՅԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻՆ ԳՈՆԵ ՓՈՐՁՈՒՄ ԷԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՂԱՐՇ ՏԱԼ

Սրբազան պայքարի գործով անցնող անձինք իրենք իրենց արարքը որակել են ահաբեկչություն՝ ԱԺ-ում երեկ հայտարարեց Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը, երբ նրանից հետաքրքրվեցին, թե ինչու է Բագրատ սրբազանի խոսքը կոնտեքստից կտրած ներկայացրել հանրությանը, թե Սրբազան շարժումն ուզում էր «գյուլլելու, նստեցնելու» միջոցով գար իշխանության: ՔԿ ղեկավարը խրոխտ հայտարարեց, թե իր խոսքերն ապացուցվում են խուզարկությամբ հայտնաբերված ապացույցներով: «Տեղյա՞կ եք, որ այդ գործով իրենց ձեռքով գրված ապացույցներ կան, որ արարքի որակումն ինքն իրեն տվել է՝ ահաբեկչություն, պլանավորված ահաբեկչություն: Սենսացիա՞ եք ինձնից ուզում: Բաց դատաքննություն է լինելու, ու կներկայացվեն սխեմաներով: Իրենք են որակում տվել, թե ոնց են գրավում ոստիկանության շենքերը»,- ասաց Պողոսյանը եւ հորդորեց գործի հետ կապված՝ թյուր կարծիք չձեւավորել հանրության մոտ: «Փորձում են նսեմացնել քրեական վարույթով ձեռք բերված ապացույցները, որոնք հիմնավորում են մեղքը: Դուք կենտրոնացել եք «գնդակահարելու» դեպքի վրա: Հիմա ինձնից ի՞նչ եք ուզում, հիմա այդ «գնդակահարելու» թիրախի փնտրտուքի մե՞ջ եք, թե ում պետք է պատերի տակ գնդակահարեին: Եղե՞լ է նման խոսակցություն՝ պատերի տակ գնդակահարելու, այո, եղել է»,- ասաց նա: ՔԿ նախագահն անդրադարձավ նաեւ Նաթան սրբազանի ու Աղան աբեղա Երնջակյանի հեռախոսային խոսակցության գաղտնալսմանը, նշեց, որ խոսակցության ձայնագրումը գաղտնալսում չի որակում: «Պարզ եմ ասում՝ այս պահին նման տվյալ չունենք, որ դա գաղտնալսում է: Մենք ունենք բովանդակային տվյալներ, որտեղ արտացոլված են որոշակի հանցակազմին բնորոշ գործողություններ, այդ մասով էլ վարույթ ենք նախաձեռնել»,- ասաց Պողոսյանը: Հիշեցնենք. Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը կալանավորվեց հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը: Ըստ Քննչական կոմիտեի՝ «Սրբազան պայքար» շարժման մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել էին ՀՀ-ում իրականացնել ահաբեկչական եւ իշխանությունը զավթելուն ուղղված գործողություններ: Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանն ԱԺ-ում հայտարարեց նաեւ, որ մարդը երբեք չպետք է սուտ խոսի՝ թե՛ պետական պաշտոնյաները, թե՛ հոգեւորականները, եւ հատկապես հոգեւորականը բարոյական պարտավորություն ունի՝ ասել ճշմարտությունը: Ու չնայած կարծում է, որ Քննչական կոմիտեի ղեկավարի պաշտոնը եւս պարտավորեցնում է լինել ազնիվ ու պատասխանատու իր խոսքի մեջ, բայց միայն երեկվա ելույթը բավական էր՝ հասկանալու համար, որ այդ բարոյախրատական ճառերն իրեն չեն ուղղված՝ ինքը ստելու հետ կապված պրոբլեմ չունի:

Փաստաբան Հովհաննես Խուդոյանը, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Քննչական կոմիտեի նախագահի կեցվածքին ու դաստիարակչական բնույթի հայտարարություններին, ինչպես նաեւ՝ Կոմիտեի գործողություններին, նկատեց. «Նման արտառոց հայտարարություններ անելուց առաջ նա լավ կանի՝ նախեւառաջ իրեն հայելու մեջ նայի, հետո նոր միայն նման հայտարարություններ անի: Եթե նախկինում գոնե փորձում էին իրավական ձեւակերպումներով գործերին արհեստական ընթացք տալ, ապա վերջին շրջանում տեղի են ունենում բացահայտ խախտումներ, օրենքը բացահայտ արդեն շրջանցում են եւ փորձում են թիրախավորել Հայ առաքելական եկեղեցուն: Միայն այն հանգամանքը, որ Քննչական կոմիտեն կարող է նույն օրը, նույն ժամին գտնել քննիչ, որը 10 հոգեւորականի կարող է կանչել հարցաքննության միայն այն բանի համար, որ պատարագներ տեղի չունենան, դա արդեն իսկ խոսուն փաստ է: Քննչական կոմիտեի նախագահը Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցներից մեկի ժամանակ ակնհայտ սուտ պնդումներ է արել, որոնք հետագայում բացահայտվել են, սակայն նա մինչ այս պահը ներողություն չի խնդրել: Այնպես որ, իր դաստիարակչական հայտարարությունների եւ դասերի թիվ մեկ հասցեատերը հենց ինքն է: Ես ունեմ 10 տարվա աշխատանքային փորձ, այս 10 տարիներին երբեւէ չեմ տեսել, որ Քննչական կոմիտեն այսքան հեղինակազրկված լիներ: Այժմ իրավիճակն ահավոր է: Արգիշտի Քյարամյանի ժամանակ գոնե քաղաքական հետապնդումներին փորձում էին իրավական շղարշ տալ, փորձում էին պրոցեսի իմիտացիա ստեղծել, իսկ այժմ արդեն քրեադատավարական գործիքները բացահայտ օգտագործվում են ապօրինի, եւ չկան համեմատության եզրեր օրենքի հետ: Անգամ մամուլի հաղորդագրություններն են ոչ պրոֆեսիոնալ: Գոռ Աբրահամյանը մի ժամանակ Գլխավոր դատախազությունում էր, այդ փուլում Գլխավոր դատախազությունն էր նման ոչ պրոֆեսիոնալ ձեւակերպումներով հաղորդագրություններ տարածում, հետո այդ անդուր ոճը տեղափոխվեց Քննչական կոմիտե, ու թեեւ հիմա չկա Գոռ Աբրահամյանը այդ կառույցներից եւ ոչ մեկում, սակայն այդ մշակույթը շարունակվում է: Պաշտոնական հաղորդագրություններ տարածելու փոխարեն զբաղվում են բացառապես քաղաքական քարոզչությամբ՝ շատ հաճախ խեղաթյուրելով քրեական գործերի տվյալները: Բայց քանի որ այս կառույցներն անթաքույց քաղաքական տիրույթ են տեղափոխվել, այս հարցի լուծումը բացառապես քաղաքական իշխանության փոփոխությունը կարող է լինել»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Միլիոններ են ստանում, բայց մի կայք չեն կարողանում աշխատեցնել

Տեւական ժամանակ է՝ Տավուշի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը չի գործում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հոկտեմբերի 27-ին հարցում էի արել. «Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը երբվանի՞ց չի գործում, ո՞րն է դրա պատճառը, կայքը ե՞րբ կվերագործարկվի»: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական ինտերնետային կայքը որոշակի տեխնիկական պատճառներով աշխատում է ընդհատումներով: Ներկա պահին ընթանում են սպասարկման բարելավման հետ կապված (սերվերում ծավալի ընդլայնման եւ այլն) աշխատանքներ»: Մարզպետի աշխատակազմից չեն պատասխանել, թե կայքը երբվանից չի աշխատում եւ երբ կվերագործարկվի: Պետական բյուջեից ամեն տարի հարյուրավոր միլիոն դրամներ են հատկացվում Տավուշի մարզպետարանի պահպանության ծախսերի համար, 2025 թվականին Տավուշի մարզպետն ու նրա աշխատակազմի պաշտոնյաները, ընդհանուր առմամբ, ավելի քան 67 միլիոն դրամ պարգեւավճար են ստանալու՝ մինչեւ տարեվերջ: Պարզ չէ, թե ինչ են անում, ինչով է չափվում նրանց աշխատանքի արդյունավետությունը, սակայն փաստ է, որ անգամ մարզպետարանի ինտերնետային կայքը չեն կարողանում աշխատեցնել:

ԴԻԼԻՋԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ

Դիլիջան համայնքից մեզ հայտնում են, որ վերջին օրերին շրջակա միջավայրի նախարարության ենթակայությամբ գործող Դիլիջան ազգային պարկի «Հաղարծին» տեղամասի 7-րդ պահաբաժնում Թուրքի դուզ եւ Թյուզ տարածքներում անօրինական կերպով մեծաթիվ ծառեր են հատվել: Այդ տարածքները հարակից են Դիլիջան համայնքի Հաղարծին եւ Հովք գյուղերին: Համայնքի բնակիչների վկայությամբ՝ նշված տարածքներում միայն վերջին 10 օրվա ընթացքում ապօրինի կերպով 68 ծառ է հատվել: Դիլիջանցիները հայտնեցին, որ հոկտեմբերի վերջին օրերին ապօրինի անտառահատումներ են կատարվել նաեւ ազգային պարկի Հաղարծին տեղամասի 12-րդ պահաբաժնում:

Բնակիչները մեզ են ուղարկել ապօրինի հատված ծառերի լուսանկարները եւ տեսանյութ: Հատված ծառերի լուսանկարները շատ են, դրանցից երեւում է, որ հաստաբուն, կանաչ, կանգուն ծառեր են հատվել, դրանք վերջերս են կտրվել, բենզասղոցով հատված ծառերի թեփը դեռ չի չորացել: Համայնքի բնակիչները հայտնեցին, որ Հաղարծին, Թեղուտ գյուղերի բնակիչներին ազգային պարկի տարածքից թափուկ վառելափայտ է տրվում, ամեն ընտանիքի՝ 2 խորանարդ մետր ծավալով: Ընդ որում՝որպես թափուկ տրված ծառերի ճյուղերի տրամագիծը չի գերազանցում 8 սանտիմետրը: Իսկ ապօրինի հատված ծառերը հաստաբուն են: Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության պետ Վլադիմիր Կիրակոսյանին տեղեկատվական հարցում էի արել՝ էկոպարեկների աշխատանքի ժամանակացույցի մասին: Հոկտեմբերի 24-ին ստացել եմ էկոպարեկային ծառայության գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանի պատասխանը, որտեղ նշված է. «Էկոպարեկային ծառայության ՀՀ Սյունիքի մարզային վարչությունում էկոպարեկային ծառայողներն իրականացնում են հերթափոխային ծառայություն 24/7 ռեժիմով, միաժամանակ ՀՀ Տավուշի մարզային վարչության Դիլիջան ազգային պարկի տեղամասում (մինչեւ սեպտեմբեր ամիսը ներառյալ), Իջեւանի եւ Արծվաբերդի տեղամասում, ինչպես նաեւ՝ ՀՀ Լոռու մարզային վարչության Վանաձորի տեղամասում էկոպարեկային ծառայության հենակետերում ծառայությունն իրականացվում է 24/7 ռեժիմով՝ հերթափոխային ծառայությամբ: Մյուս դեպքերում էկոպարեկային ծառայության աշխատողների աշխատանքային ժամը սկսվում է 09:00-ին եւ ավարտվում 18:00-ին: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ սույն թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ Տավուշի մարզային վարչության Դիլիջան ազգային պարկի տեղամասում՝ հենակետերում ծառայությունը չի իրականացվում 24/7 ռեժիմով՝ նկատի ունենալով, որ տեղամասը ներգրավված է բնակչության կողմից ոչ արտադրական նպատակով անվճար թափուկ վառելափայտի մթերման հսկողության գործընթացում»:

Այսինքն՝ հոկտեմբերին էկոպարեկային ծառայությունը Դիլիջան ազգային պարկի տեղամասում շուրջօրյա հերթապահություն չի իրականացրել, նաեւ շաբաթ-կիրակի օրերին անտառի հսկողություն չի իրականացրել: Նոյեմբերին էլ էկոպարեկները նույն ժամանակացույցով են աշխատում: Դիլիջան համայնքի բնակիչների վկայությամբ՝ բնության հատուկ պահպանվող տարածք հանդիսացող Դիլիջան ազգային պարկում ընդհանրապես արգելված են ծառերի հատումները, սակայն ապօրինի հատումների պատճառով այժմ անտառում բացատներ են առաջացել: Բնակիչները հայտնում են, որ Հաղարծին տեղամասի անտառների պահպանության համար պատասխանատու են էկոպարեկային ծառայության պաշտոնյա Արտակ Հարությունյանը եւ էկոպարեկային ծառայության Դիլիջան տեղամասի պետ Արտյոմ Խաչատրյանը: Իսկ վերջերս միջպետական ավտոճանապարհի Դիլիջանի առաջին ոլորանից հանվեց էկոպարեկային ծառայության «պոստը»՝ պահակետը, որի ղեկավարն Արտյոմ Խաչատրյանն էր: Դիլիջանի բնակիչները մեզ բողոքեցին, որ այդ պահակետում հերթապահություն իրականացնողները բեռնատար մեքենաները ստուգելիս խտրական վերաբերմունք են ցուցաբերել. Իջեւանից ժամանած, փայտով բեռնված ավտոմեքենաների տերերի հանդեպ լոյալ են եղել, իսկ դիլիջանցիների հանդեպ՝ խիստ: Դիլիջանցիները դա բացատրում են նրանով, որ նախկինում ոստիկան աշխատած Արտյոմ Խաչատրյանը ծագումով իջեւանցի է:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԻՍԿ ՄԵՆՔ ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ԱՍՈՒՄ, ՈՐ ԲԱՔՈՒՆ ԷԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԳԻՆ ՔԱՂԱՔՆ Է

«Գիտնականներն արդեն բազմաթիվ աշխատանքներ են արել այս թեմայով, բայց անհրաժեշտ է ավելին՝ հետազոտություններ, ցուցահանդեսներ, հրապարակումներ, պատմական քարտեզներ: 20-րդ դարի սկզբին հին ռուսական կայսրական քարտեզները հստակ ցույց են տալիս, որ այսօրվա Հայաստանի տարածքում գրեթե բոլոր տեղանուններն ադրբեջանական ծագում ունեն. չկա Սեւանա լիճ, բայց կա Գյոյչա լիճը»,- ասել է Ալիեւը: Եվ չնայած Հայաստանի իշխանությունները պնդում են, որ Ադրբեջանի հետ Հայաստանը պատրաստվում է խաղաղություն հաստատել, Բաքվի բռնապետը այս էլ որերորդ անգամ ՀՀ սուվերեն տարածքը համարում է ադրբեջանական: Երեւանն անվանում է Էրիվան, Վարդենիսը՝ Բասարգեչար, Սեւանն էլ՝ Գյոյչա եւ առհասարակ պնդում է, որ Հայաստան պետություն չկա, Հայաստանը, ըստ Իլհամի, «Արեւմտյան Ադրբեջան» է եւ 300 հազար ադրբեջանցիների «պատմական հայրենիքը», որտեղ նրանք պատրաստվում են մոտ ապագայում ապրել: ԽՍՀՄ տարիների Ժողտնտեսության ինստիտուտի քարտեզագրության բաժնի վարիչ, «Նահապետ» հրատարակչության տնօրեն, քարտեզագետ **Սեն Հովհաննիսյանը** հարյուրավոր հին քարտեզներ ունի, նաեւ ինքն է բազմաթիվ քարտեզներ կազմել, որոնք մեծ արժեք ունեն: Դրանց միայն մի մասն է հրապարակված գրքով: «Հրապարակը» զրուցել է նրա հետ այս եւ այլ թեմաների մասին:

- Պարոն Հովհաննիսյան, ամեն անգամ Ալիեւի հայտարարությունները փոթորկում են հայաստանյան իրականությունը, հատկապես որ հայկական կողմից չի հնչում արձագանք, չհաշված շարքային մարդկանց, ոչ պաշտոնյաների արձագանքները: Ի վերջո՝ ինչպե՞ս են ծագել տեղանունները, ովքե՞ր են դրանք կիրառել, եւ տվյալ տեղանունը որքանո՞վ կապ ունի այս կամ այն երկրի պատմության հետ, դա ո՞ւմ սեփականությունն է:

- Կոնկրետ Սեւանա լիճը տարբեր անուններ է ունեցել՝ Գեղամա լիճ, Գեղամա ծով, անգամ՝ Երեւանյան լիճ: Հետաքրքիր է, որ 1800-ականների ֆրանսիական քարտեզներում Սեւանը ներկայացվում է որպես Երեւանյան լիճ: Իսկ առհասարակ տեղանունները չեն կարող օրինաչափություններ համարվել: Դրանց կիրառումը մարդկանց ծագումից է գալիս: Մարդիկ սիրում են տեղանուններ դնել այնտեղ, որտեղ ապրում են: Տեղանվան նպատակներից մեկն էլ այն է եղել, որ մարդիկ իրար փոխանցեն, թե որտեղ են գտնվում, որտեղ են բնակվում եւ այլն: Ինչ վերաբերում է Սեւանա լճին ադրբեջանական անվանումներ տալուն, ապա դա միանշանակ արվում է միտումնավոր: Ինչո՞ւ, որովհետեւ Հայաստանում ընդունվեց օրենք, որն ուժի մեջ մտավ 2002 թվականի հունվարի 1-ից: Այնտեղ ասվում է, որ Սեւանա լիճը Հայաստանի բնության հրաշալիքներից է, ինչպես նաեւ՝ հայ ժողովրդի խորհրդանիշներից, որն ունի հանրապետական եւ տարածաշրջանային բացառիկ տնտեսական եւ էկոլոգիական նշանակություն: Ստիպված պետք է թշնամի անվանեմ՝ մեր թշնամի Ադրբեջանը, այս օրենքը լավ հասկանալով, գիտակցելով, թե Սեւանն ինչ նշանակություն ունի հայ ժողովրդի համար, վիրավորելու, անկայունություն ստեղծելու, նսեմացնելու եւ տարբեր նման բաների համար հաճախակի օգտագործում է «Գյոյչա» բառը: Այդ անվանումն իրականում կիրառվել է որոշ քարտեզներում, սակայն ոչ մեզ վիրավորելու համար: Բայց այժմ այնպես են ներկայացնում, որ վիրավորեն մեր զգացմունքները, ցավեցնեն մեզ: Գիտականորեն մենք՝ գիտնականներս, որեւիցե անելիք չունենք, անելիք չունի նաեւ հայ ժողովուրդն այստեղ: Այս հարցը պետք է լուծեն մեր պետական այրերը: Դրա ականջը պետք է մի լավ ձգեն ու ականջին մի երկու լավ խոսք ասեն: Ունենք արտաքին գործերի նախարարություն, ԿԳՄՍ նախարարություն, մի ժամանակ Ակադեմիա ունեինք՝ շատ լավ, Լեզվի ինստիտուտ ունենք: Այսինքն՝ մեզ ով ասես, կարող է վիրավորել, ինչ ասես ասել ու անցնել առաջ: Բա ինչի՞ համար է պետությունը, ինչի՞ համար է իշխանությունը, եթե ոչ իր ժողովրդին պաշտպանելու համար: Ալիեւն իր ներքին լսարանի համար է խոսում, լավ, իսկ Հայաստանի ներքին լսարանին ո՞վ պետք է պաշտպանի:

- Իսկ անվանումների մասին առհասարակ՝ Բասարգեչար, Էրիվան, ինչպես նաեւ մի շարք գյուղեր կան, որ օտարոտի անուններ ունեն, ինչո՞ւ են երբեմն ադրբեջանական անվանումներով կոչում:

- Նախ ասեմ, որ գյուղերից շատերը ո՛չ ադրբեջանական անվանումներ են ունեցել, ո՛չ էլ թուրքական: Պարսկական անվանումներ են եղել: Ծագումը գալիս է Իրանից: Հայաստանը եղել է Պարսկաստանի տիրապետության տակ: Բայց քանի որ մուսուլմանական անվանումներ են, մարդկանց մոտ կարծիք է ձեւավորվել, որ ուրեմն թուրքերեն է կամ ադրբեջաներեն: Կոնկրետ Բասարգեչարը թուրքերեն է: Այն կապ ունի «շուկա» բառի հետ: Նորից եմ կրկնում՝ այդ անվանումները մարդիկ են դրել, ինչը չի դարձնում տարածքն ադրբեջանական կամ թուրքական: Եթե Սեւանն անվանում են Գյոյչա, ապա ես էլ ասում եմ, որ Բաքու անվանում չկա, խոսքը հայկական Բագին քաղաքի մասին է: Տիգրան Մեծը կառուցեց Տիգրանակերտ քաղաքը, որից քիչ հեռու Բագինն է, ներկայիս Բաքուն: Տիգրան Մեծն այնտեղ զոհեր էր մատուցում: Մենք ինչո՞ւ չենք ասում, որ Բաքուն հայկական Բագին քաղաքն է:

Չկա Սեւանա լիճ, կա Գյոյչա լիճ՝ հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խոսեք՝ ինչի՞ց եք վախենում

ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը երեկ լրագրողների հետ զրույցում նշել է, թե Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը, իր հայտնի ձեւակերպմամբ, երբ Սեւանը Գյոյչա է կոչել, նկատի չի ունեցել, թե այսօր Սեւան գոյություն չունի: Միրզոյանն ասում է. անկախ մանրամասներից, «նման ձեւակերպումը կառուցողական չէ եւ չի համապատասխանում խաղաղության տեսանկյունից ճիշտ նարատիվին», բայց անմիջապես հավելում է, որ, այո, կան ցարական ժամանակաշրջանի բազմաթիվ քարտեզներ, որտեղ Սեւանը նշված է նաեւ այլ անվանումով, սակայն մտնել պատմական քննարկումների մեջ՝ դժվար կարող է լինել, քանի որ դա կարող է ստեղծել տարաբնույթ տարաձայնություններ եւ հայեցակարգային խնդիրներ՝ հատկապես հայկական տեղանունների վերաբերյալ: «Չեմ էլ ուզում գնալ պատմության մեջ, որովհետեւ շատ անհարմար իրավիճակ կարող է ստեղծվել, եւ հայկական տեղանուններ կտեսնենք մի քիչ ավելի լայն տարածքների վրա»,- ասել է նա:

Այս խուճուճ դիվանագիտական պատասխաններից երեւում է այն սարսափը, որ հայ պաշտոնյաներն ունեն Իլհամ Ալիեւի նկատմամբ: Մինչդեռ ինչքան հստակ ու միանշանակ կարելի էր պատասխանել չափն անցած ագրեսորին: Ասել, որ մի 200 տարի առաջ առհասարակ Ադրբեջան գոյություն չի ունեցել, որ Հայաստանն անգամ Հռոմի Կոլիզեյի քարտեզում է պատկերված եւ Քսենոֆոնի գրքերում է հիշատակված: Իսկ Բաքուն ու Կիրովաբադը ոչ միայն քարտեզների վրա չեն եղել, այլեւ հայերն են կառուցել, ու 500 հազար հայ է ապրել այդ արհեստածին պետության տարածքում:

ԻՄ ԶՈՔԱՆՉԸ ՔՊ-ԱԿԱՆ Է ԵՂԵԼ ԴԵՌ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Պարզվում է՝ ՔՊ-ական պատգամավոր Կարեն Սարուխանյանի հայտնի զոքանչը, որը Գյումրու քաղաքապետարանում շաբաթներ առաջ տեղի ունեցած միջադեպով տնային կալանքի տակ է, հին ՔՊ-ական է: Պատգամավորն ասում է, որ ոչ թե Վարդան Ղուկասյանին է նա աջակցել, այլ դարձել է ոմանց ապօրինի հրահանգ կատարողը, ինչի հետեւանքով էլ այսօր այդ վիճակում է հայտնվել: Իշխանական պատգամավորի զոքանչը, որ Գյումրու քաղաքապետարանի կրթության վարչությունում է աշխատել դեռ իշխանափոխությունից առաջ, Վարդան Ղուկասյանին ձերբակալելու մի քանի ժամանոց օպերացիայի ժամանակ, ըստ մեղադրանքի, իբրեւ թե զանգել է եւ մանկապարտեզների աշխատակիցներին հորդորել է գործադուլ անել, գալ քաղաքապետարանի դիմաց: Զրուցել ենք փեսայի՝ **Կարեն Սարուխանյանի** հետ:

- Դուք վստահեցրել եք, որ Ձեր զոքանչը Վարդան Ղուկասյանի աջակիցը չէ, եղել է ընդամենը հրահանգ կատարող, բայց ասում են՝ լավ էլ «բոյ է տվել» Վարդան Ղուկասյանի համար:

- Ես վստահեցնում եմ, որ իմ զոքանչը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, ով ասում է, թե կռիվ է տվել, սուտ է ասում, էդ կինը մինչեւ Վարդան Ղուկասյանի քաղաքապետ դառնալն էլ էդտեղի աշխատող է եղել, առաջատար մասնագետ այդ բաժնի, եւ, ամենայն հավանականությամբ, ստիպել են, որ զանգ անի, մարդ կանչի:

- Եթե Ձեր զոքանչը ՔՊ-ական է, ինչո՞ւ է կատարել նման հրահանգ:

- Թող քննեն, կհասկանանք, դա իմ տիրույթում չէ, բոլորն են կատարել հրահանգ, եւ տվյալ բաժնում ովքեր եղել են, բոլորն այսօր տնային կալանքի մեջ են: ...Այո, ես վատ եմ զգում, որ իմ զոքանչը տնային կալանքում է, կապ չունի, թե ով է, ցանկացած կնոջ նման կարգավիճակի համար ես վատ կզգայի:

- Բայց, իմ կարծիքով, Դուք վատ զգալու այլ պատճառ պիտի ունենաք, եթե իսկապես Ձեր զոքանչը ՔՊ-ական է: Ստացվում է, որ ձեր կուսակցությունում գաղափարական, սկզբունքային մարդիկ չեն հավաքված եւ կարող են թեթեւ ճնշումներին չդիմանալ, ասենք՝ ապօրինի հրահանգ կատարել:

- Դե, թող իրավապահները պարզեն, թե ինչ իրավիճակ է եղել, եւ ինչ իրավիճակում է նման կերպ վարվել, գուցե այնպիսի իրավիճակ է եղել, որ ինքն էլ կին է, չի կարողացել դիմադրել:

- Մենակ չասեք, որ զենքը դրել են գլխին ու ստիպել են անել: Մանավանդ, որ Վարդան Ղուկասյանին էլ իրավապահները հենց այդ ժամերին պատանդ էին պահում իր աշխատասենյակում: Այսինքն՝ ո՞վ պետք է հրահանգ տար:

- Ես չգիտեմ՝ ինչ է եղել, բայց մի բան հստակ է, որ այդ բաժնի անխտիր բոլոր աշխատողները տնային կալանքի մեջ են:

- Իսկ Դուք չե՞ք զրուցել Ձեր զոքանչի հետ, գուցե ինքը հոգով ընդդիմադիր է, եւ իրականում ոչ թե պարտադրել են, այլ իր կամքով է փորձել Ղուկասյանին պաշտպանել՝ կատարվող անարդարությունը տեսնելով:

- Ո՛չ, չեմ զրուցել, բայց չի կարող հոգով ընդդիմադիր լինել այդ կինը, որովհետեւ մինչեւ հեղափոխությունը, երբ մենք ընդդիմություն էինք, այդ ժամանակվանից էր ինքը ՔՊ կուսակցության անդամ:

- Դուք ներկայացնում եք, որ Ձեր զոքանչը երդվյալ ՔՊ-ական է, բայց տրամաբանական է, որ պետք է նախընտրեր ազատվել գործից, երբ ընդդիմադիր Վարդան Ղուկասյանը համայնքապետ դարձավ, գոնե ազատվեր, երբ իրեն նման հրահանգ էին իջեցնում:

- Դե, ստեղծված իրավիճակում... ես չգիտեմ՝ ինչ իրավիճակ է եղել, քննությունը պիտի պարզի: Համենայնդեպս, այն անձինք, ովքեր ստիպել են, հիմա կալանքի մեջ են, չեմ կարող անուններ ասել...

- Իսկ հնարավո՞ր է, որպես ոչ սկզբունքային կուսակցականի, ՔՊ շարքերից հեռացնեք Ձեր զոքանչին:

- Նման քննարկում չի եղել, դա իրավական տիրույթում գտնվող հարց է:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՏԵՍԱԼՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 450 ՀԿ Է ԳՐԱՆՑՎԱԾ, ԲԱՅՑ ԱՐԴՅՈ՞Ք ԴՐԱՆԻՑ ԳՈՆԵ 100-Ը ԳՈՐԾՈՒՄ Է

«Դրապարակի» զրուցակիցն աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար, «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Աշոտ Եսայանն** է:

- Վերջին տարիներին երեխաների հետ կապված այնպիսի ահասարսուռ իրադարձություններ են տեղի ունենում, որ հասարակությունն ամիսներով չի կարողանում ուշքի գալ: Մի տեղ մայրն է երեխաներին սեռական բռնության ենթարկում եւ դաժանաբար ծեծում, ապա տեսանկարահանում եւ վաճառում, մի ուրիշ տեղ մայրը հաշմանդամ դստերն այնքան է ծեծում, որ սպանում է, այլ դեպքում հայր կոչվածը երեք տարեկան երեխային է դաժանաբար խեղդամահ անում եւ դիակը տեղափոխում: Ինչն է նման դեպքերի պատճառը, գուցե դրանք չեն շատացել, այլ պարզապես հանրային հնչեղություն են ստացել: Ինչ նախադեպ է սա:

- Մարդկության ողջ պատմության ընթացքում, ցավալիորեն, միշտ էլ նման դեպքեր եղել են: Սպանությունն ինքնին սարսափելի երեւույթ է, սակայն գոնե կարելի է ընկալել, եթե այն տեղի է ունենում չափահասների վիճաբանության եւ կռվի ժամանակ: Այդ ժամանակ գոնե ինչ-որ կերպ գլխիդ մեջ կարողանում ես տեղավորել կատարվածը, բայց այն, որ 3 տարեկան երեխային հայրը կարող է դաժանորեն սպանել, ընկալելի չէ: Որտե՞ղ էիք, մարդ Աստծո: Ի վերջո, գյուղ է, կան հարեւաններ, չկան 16 հարկանի բազմաբնակարան շենքեր, բոլորն էլ իրար ճանաչում են: Օրենք ունենք ընտանեկան բռնության վերաբերյալ, տարատեսակ ՀԿ-ներ: Հասարակության մեջ կարծիք կար, որ ընտանեկան բռնությունն ամեն մեկի ընտանիքի հարցն է, եւ չարժե դրան միջամտել, սակայն օրենքն իրականում հստակ կարգավորում է խնդիրը: Որտե՞ղ են սոցիալական ծառայությունները, որտե՞ղ է ոստիկանությունը: Սրանք հարցեր են, որոնք պետք է տալ, բայց միեւնույն ժամանակ, իմ կարծիքով, այս պատմության ամենամեծ մեղավորները հարեւաններն են: Հարեւանները վստահաբար գիտեն՝ ով ով է: Եթե Երեւանի բազմաբնակարան շենքերում շատերն իրար չեն էլ ճանաչում, ապա գյուղերում դա բացառված բան է: Այդ ընտանիքում անպայման ինչ-որ շեղումներ նկատել են տեղացիները, սակայն լռել են: Մարդը եթե հոգեկան հիվանդ է եղել, ապա ինչո՞ւ համապատասխան ծառայությունները չեն զբաղվել, ինչպես նաեւ հարց է ծագում՝ այդ տղամարդը եղե՞լ է հոգեբուժական ծառայությունում, գուցե բուժման ենթակա է եղել, գուցե՝ ոչ, սակայն այս ամենը փաստում է այն մասին, որ անտարբերությունը մեր ժողովրդի համար դարձել է մեծ ողբերգություն:

- Բայց արդյո՞ք հարեւաններն են այս ամենի պատասխանատուն:

Հայաստանն այնքան դեմոկրատ երկիր է, որ այդքան հասարակական կազմակերպություններ են գործում, բայց ինչո՞վ են դրանք զբաղվում:

- Իշխանությունների թեթեւ ձեռքով գիշերօթիկ դպրոցներ փակվեցին, մանկատներ: Այդ դեպքում՝ ինչո՞ւ:

- Ես «ՍՕՍ մանկական գյուղեր»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահն եմ: Օրերս նշեցինք հիմնադրամի 35 ամյակը: Քաղաքականությունն այնպիսին է, որ փակ հաստատություններից գնում են դեպի բաց հաստատություններ: Երեխան ամենալավը ապրում է իր կենսաբանական ընտանիքում: Ի՞նչ անել, որ կարիքավորությունը չդառնա այլ հաստատություններ դիմելու առիթ: Մի քանի ամիս առաջ փակվեց Գավառի մանկատունը, այդ երեխաները տեղափոխվեցին «ՍՕՍ մանկական գյուղեր»: Ոչինչ, որ ծախսերն ավելի շատ են, շենք-շինություն տաքացնել, 200 աշխատող ավել պահել, բայց ավելի արդյունավետ է նման հարթակում աշխատելը: Ունենք բաց կառույցներ, որոնք աշխատում են այն ընտանիքների հետ, որոնք հավանական է, որ կարող են լքել իրենց երեխաներին, աջակցում են, օգնում են նրանց: Օգնում են ոչ միայն նյութապես, այլեւ գիտելիք ստանալու տեսանկյունից: Պետք է քննարկել բոլոր տարբերակները, բայց ընտրել լավագույն տարբերակը:

- Եթե պետությունը, մի ոտքը երկու կոշիկի մեջ դրած, անտեսելով ոլորտի մասնագետներին, փակեց հատուկ դպրոցներ եւ մանկատներ, արդյո՞ք պարտավոր չէր նվազագույնը զարգացնել սոցիալական ինստիտուտը, ինչն այժմ բավականին թույլ վիճակում է: Այնպես չէ, որ խնդիրը միայն ֆինանսն է, կան ընտանիքներ, որոնք ֆինանսապես ապահով են, բայց, ենթադրենք, ծնողներից մեկը մոլագար է:

- Պետք է մի բան իմանալ, բոլոր երեխաները ռիսկային են, սա թող սթափեցնող կոչ լինի հայ հանրությանը: Ինչ վերաբերում է պետությանը, ապա չի կարելի կողպել դռները եւ այլ աշխատանք կատարել: Սոցիալական աշխատողների քանակը սարսափելի պակաս է: Ինչու, որովհետեւ 120 հազար մարդ եկել է Հայաստան: Եթե առաջ սպասարկում էին օրվա մեջ հինգ անձի, ապա հիմա՝ ութ: Սոցաշխատողը, ենթադրենք, իքս մեկին է ընդունել, ենթադրենք՝ մարդն ունի ընտանեկան կոնֆլիկտ, այդ ո՞վ բոլորի ներկայությամբ կբացի բերանը եւ կխոսի: Դրա համար այլ պայմաններ են հարկավոր, ինչը Հայաստանում չկա: Որպեսզի մարդը սոցաշխատողին սկսի վստահել, այն մեծ աշխատանք ու ճանապարհ է պահանջում:

- Սպանված երեխայի եղբայրներին, քրոջ հետ պետությունն ինչպե՞ս պետք է վարվի՝ այդ ընտանիքից նրանց փրկելու համար:

- Նախ՝ պետք է երեխայի մոր մեղավորության աստիճանը հասկանալ, եթե այն հաստատվեց, դատարանը պետք է այդ կնոջը զրկի մայրական իրավունքներից, ինչից հետո երեխաներին պետք է խնամատար ընտանիք գտնել: Ոչ թե խնամակալ, այլ՝ խնամատար: Պետությունը որոշակի հետազոտություն անելուց հետո գտնում է նման ընտանիք եւ փոխարենը 70 հազար դրամ գումար է հատկացնում երեխայի համար: Կա մոնիթորինգի համակարգ: Պետք է պարբերաբար այցելել ընտանիքներ եւ հասկանալ, թե ինչ է կատարվում: Իմ կարծիքով՝ որդեգրման պարագան ավելի ճիշտ է: Կա Հայ օգնության ֆոնդ, պետք է ժամանակավոր տանել այնտեղ այդ երեխաներին, հետո արդեն իրավիճակը ցույց կտա:

Սոցիալական ինստիտուտներ Հայաստանում գոյություն չունե՞ն:

- Այժմ ցավալիորեն մեծ անտարբերություն է նկատվում: Մենք այն կարող ենք ուղղակի ոչնչացնել: Սոցիալական ծառայությունը չի կարող այնքան ակնոց ունենալ, որ կարողանա հերթով տեսնել, թե ում ընտանիքում ինչ է կատարվում: Դա առաջին հերթին պետք է գա դպրոցից, մանկապարտեզից, ինչպես նաեւ՝ հարեւաններից: Պետք է ահազանգել եւ կանխարգելել: Հայաստանում 450 ՀԿ է գրանցված, բայց արդյո՞ք դրանցից գոնե 100-ը գործում է մշտապես: Երբեմն ոմանք հպարտանում են, որ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵԾՈՂ ՔՊ-ԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԸ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԵՆ. ՆԱ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԵՏ Է «ԱՇԽԱՏՈՒՄ»

Նոյեմբերի 2-ին Նիկոլ Փաշինյանը Հովհաննավանքում մի խումբ ՔՊ-ականների հետ մասնակցեց կարգալույծ արված քահանա Ստեփան Ասատրյանի մատուցած ֆեյք պատարագին: Մի մասը եկեղեցու ներսում «պատարագն» էր ունկնդրում, իսկ մյուսները բակում էին մնացել՝ մոտ 700-750 անձ: Նրանց մեջ կային մոտ 100 վառ նիկոլականներ, մյուսներն իշխանական քաղաքական գործիչներ էին, անվտանգության աշխատակիցներ, ոստիկանության բացահայտ եւ ծպտյալ ծառայողներ:

Նախորդ կիրակի նկատեցիք, որ Հովհաննավանքի տարածքում, ակնոցն աչքերին, այս ու այն կողմ էր քայլում Թալին խոշորացված համայնքի Արագածավան գյուղի ՔՊ-ական ՋՕԸ նախկին պետ Սուրեն Թորոսյանը. մինչ կփորձեինք զրուցել նրա հետ, նա անհետացավ մեր տեսադաշտից: Սուրեն Թորոսյանը, հիշեցնենք, այդ մարզի ամենամոլի նիկոլականն է, անգամ մասնակցել է Աննա Հակոբյանի «Կրթությունը նորաձեւ է» միջոցառումներին: Սուրեն Թորոսյանի պաշտոնն այս տարվա սկզբին Թալինի ՔՊ-ական ղեկավար Տավրոս Սափեյանը բարձրացրել էր. այդ ժամանակ գրել էինք, որ նա համայնքապետարանի կոմունալ բաժնում աշխատանքի է նշանակվել:

Նշենք նաեւ, որ Սուրեն Թորոսյանի դեմ քրեական գործ կա հարուցված: Քրգործը վերաբերում է նրան, որ 2023թ. հունիսի 7-ին ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում էր ստացվել այն մասին, որ նույն օրը, ժամը 19:00-ի սահմաններում, Արագածավան բնակավայրում գտնվող ավտոմեքենաների լվացման կետի մոտ ծագած վիճաբանության ընթացքում Արագածավանի բնակիչ՝ ՔՊ-ական Սուրեն Թորոսյանը գազաբալոնով գազ է փչել նույն բնակավայրի բնակիչ՝ 24-ամյա Ա. Ս.-ի դեմքին, փայտով հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Վերջինս դրա արդյունքում ստացել էր ամբուլատոր բուժօգնություն: Գործն այժմ հայտնվել է փակուղում՝ առաջ չի գնում, քանի որ հանցանք կատարած անձը կարկառուն ՔՊ-ական է, իսկ իրավապահներն այդքան համարձակություն չունեն, որ նրան մեղադրանք առաջադրեն եւ գործն ուղարկեն դատարան: Ենթադրվում էր, որ այդ դեպքից հետո նման վարք դրսեւորած պաշտոնյան գոնե պետք է ազատվեր ՋՕԸ պետի պաշտոնից, սակայն նրան մի բան էլ առաջ են տարել՝ նոր պաշտոն տալով:

Ի դեպ, Սուրեն Թորոսյանն էլ միանգամայն «ճիշտ» հետեւություն է արել, որ եթե ինքն անպատիժ է մնում, ուրեմն ինչ ուզենա, կանի, եւ սոցիալական ցանցերում շարունակում էր խուլիգանական վարք դրսեւորել՝ հայհոյանքներ գրելով իշխանության ընդդիմախոսների հասցեին:

Երեկ փորձեցինք զրուցել Թորոսյանի հետ, սակայն Թալինի համայնքապետարանի աշխատակիցն ասաց, որ նա աշխատում է Արագածավանի համայնքապետարանում: Վերջինիս վարչական ղեկավար Արթուր Նազարյանին հարցրինք՝ Ս. Թորոսյանը համայնքապետարանո՞ւմ է, կարո՞ղ ենք զրուցել նրա հետ: «Սուրեն Թորոսյանը Թալինի համայնքապետարանի կոմունալ բաժնի պատասխանատուն է, պետը Հայրապետյանն է, բայց ոչ Արագածավանում, այլ գյուղերում է: Իրեն տեղափոխել են մարզի մեջ այլ գյուղերում աշխատելու, ինքը նստելավայր չունի, ունեցել է, բայց հիմա չունի, Արագածավանում կոմունալ բաժին ունենք, որին սենյակ է հատկացված, ինքն այդ սենյակում նախկինում նստել է»:

Իսկ թե քանի գյուղ է «հատկացված» Թորոսյանին, որ գյուղերի հետ է նա աշխատում, վարչական ղեկավարն ասաց՝ այդ հարցով պետք է դիմել Թալինի համայնքապետարան: Իսկ Թալինի համայնքապետարանն այս օրերին զբաղված է առաջիկա կիրակի կայանալիք «մեծ» իրադարձության նախապատրաստությամբ. հայտնի է, որ Նիկոլ Փաշինյանը որոշել է այս անգամ պատարագի մասնակցել Թալինի եկեղեցում՝ Տեր Թադե քահանայի մատուցմամբ: Վերջինս, հիշեցնենք, կարգալույծ արված չէ, բայց անցած շաբաթ մասնակցել է կարգալույծ Արամի պատարագին եւ տարանջատվել Մայր Աթոռից՝ քննադատելով Եկեղեցուն եւ իր աջակցությունը հայտնելով կարգազանց քահանային:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԱԽՔ

ՉԿԱ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԿԱ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱԴԱՐ

Արմեն Գրիգորյանը յոթ տարուց ավելի է՝ պետական պաշտոն է զբաղեցնում՝ Անվտանգության խորհրդի քարտուղարն է, բայց այդպես էլ չկարողացավ դուրս գալ արեւմտյան գրանտակերի դերից, շարունակում է մտածել ու գործել այնպես, ինչպես մի շարքային գրանտակեր, որի գործունեությունն ուղղված է իր ստացած դրամաշնորհի հաշվետվությունն ապահովելու համար, որ կարողանա հաջողությամբ դիմել հաջորդի համար: Նա հայտարարում է, որ մոտ ժամանակներս Ադրբեջան կայցելեն Հայաստանի քաղհասարակության ներկայացուցիչներ, եւ այդ փոխադարձ այցելությունները կնպաստեն հասարակությունների հաշտեցմանը եւ, այսպես կոչված, խաղաղության օրակարգի ամրապնդմանը: Ինչո՞ւ այս հեքիաթն իրականության հետ որեւէ աղերս չունի:

Այն, ինչ նկատի ունի Արմեն Գրիգորյանը՝ քաղհասարակություն ասելով, ամենեւին էլ քաղհասարակություն չէ, Արմեն Գրիգորյանը տեղյակ չէ, որ իրենց իշխանության տարիներին Հայաստանում ձեւավորվել է իրական քաղհասարակություն, ի հակադրություն այն «քաղհասարակության», որի ներկայացուցիչն էր ինքը, եւ որը ծնվել, սնվել եւ գոյատեւում էր բացառապես ամերիկյան եւ այլ արեւմտյան ֆոնդերի ու դեսպանատների ֆինանսական օժանդակությամբ, եւ որի գործունեությունն ուղղված է Հայաստանի եւ նրա ինքնիշխանության դեմ:

Քաղհասարակություն ասելով՝ նկատի ունեն այն անհատներին, հասարակական խմբերին կամ կազմակերպություններին, ովքեր, չունենալով կուսակցական կամ քաղաքական պատկանելություն, պայքարում են հասարակական տարբեր խնդիրների լուծման համար: Քաղհասարակությունը ոչ թե Սորոսի հիմնադրամի միջոցներով ֆինանսավորվող եւ այդ հիմնադրամի կողմից ուղղորդվող կազմակերպություններն են կամ դրանց անդամակցող գրանտակերները, այլ՝ այն մարդիկ, ովքեր պայքարում են Հայաստանում քաղաքական ազատությունների համար, քաղհասարակությունը բանտերում պահվող Սրբազան շարժման անդամներն են, քաղհասարակությունը փաստաբան Ալեքսանդր Կոչուբաեւն է, որը բանտարկվել է ընդամենը սեփական կարծիքն արտահայտելու համար, քաղհասարակությունը ՀԱԵ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Աջապահյանն է, քաղհասարակությունն այն հազարավոր մարդիկ են, ովքեր հրապարակներում պայքարում են քաղբանտարկյալների եւ խղճի կալանավորների ազատ արձակման համար: Արդյո՞ք այդ քաղհասարակությանը նկատի ունի Արմեն Գրիգորյանը, արդյո՞ք նրանք են բանտերից դուրս գալու եւ գնալու Բաքու: Ոչ, որովհետեւ նա նույնիսկ տեղյակ էլ չէ, թե ինչ է քաղհասարակությունը, կամ որ Հայաստանում կա քաղհասարակություն: Ինչպես նշեցինք, քաղհասարակությունը գրանտակերների ընկալմամբ նրանք են, որոնց ԱՄՆ դեսպանը կամ Սորոսի հիմնադրամը նշանակում է քաղհասարակություն, իսկ հետո վճարում քաղհասարակություն աշխատելու դիմաց:

Եթե Հայաստանում կա քաղհասարակություն, թեկուզ դրանց ներկայացուցիչների մի մասը բանտերում է եւ կալանավայրերում, ապա Ադրբեջանում ընդհանրապես քաղհասարակություն չկա, Ադրբեջանում բռնապետության պայմաններն ավելի խիստ են, Փաշինյանը բռնապետության հաստատման ճանապարհին է, բայց արագ եւ արդյունավետ սովորում է իր ադրբեջանցի գործընկերոջից: Այնտեղ «քաղհասարակությանը» նշանակում է ոչ թե ԱՄՆ դեսպանը, այլ՝ Իլհամ Ալիեւը, Ադրբեջանի հատուկ ծառայությունները: Այն «քաղհասարակություն», որը եկել էր Երեւան, Ալիեւի եւ Ադրբեջանի հատուկ ծառայությունների նշանակած մարդիկ էին, եւ նրանք ամենեւին չէին եկել Հայաստան՝ հաշտեցման նպատակով, դա ուխտագնացություն էր դեպի «պատմական հայրենիք»:

Գրանտակերները տարիներ շարունակ դրամաշնորհներ են իրացրել եւ յուրացրել հենց այդպիսի՝ «հասարակությունների հաշտեցում» ծրագրերի շրջանակներում: Գաղափարը հետեւյալն է՝ սկզբում հանդիպում են հակամարտող երկրների քաղհասարակությունների ներկայացուցիչները, հետո՝ լրագրողները, քաղաքագետները, փորձագետները: Նրանք խոսում են խաղաղության կարեւորության եւ օգտակարության մասին, այդ ուղերձը փոխանցում են իրենց հասարակություններին, եւ հասարակություններն էլ տոգորվում են խաղաղության գաղափարով, եւ, ի վերջո, բոլորը հրաժարվում են թշնամության եւ վրեժխնդրության գաղափարից, հաստատվում է համատարած եւ կատարյալ խաղաղություն: Որպես դրամաշնորհ ստանալու եւ այն իրացնելու միջոց վատ չէ, բայց իրական կյանքում այս հեքիաթը չի աշխատում՝ մի պարզ պատճառով, որ քաղաքակրթության զարգացման ամբողջ պատմությունը պայքար է ռեսուրսների համար, ինչն իր հերթին ենթադրում է մրցակցություն, թշնամանք եւ պատերազմ: Պարզ օրինակ՝ Ադրբեջանն ուզում է տիրանալ Սեւանա լճին, որպես քաղցրահամ ջրի հսկայական պաշարի: Այն չի կարող միաժամանակ պատկանել եւ Հայաստանին, եւ Ադրբեջանին: Որպեսզի Արմեն Գրիգորյանի համար պարզ լինի, ավելի պարզեցնենք. եթե ԱՄՆ դեսպանը գրանտ է տալիս, այն պետք է հասնի կամ իրեն, կամ մեկ ուրիշ հայտատուի, այդ ժամանակ իրենց միջեւ խաղաղություն չի կարող լինել: Կամ՝ եթե ինչ-որ մեկը հավակնի ԱԽՔ պաշտոնին, Արմեն Գրիգորյանը դժվար թե հոժարակամ այդ պաշտոնը զիջի նոր հավակնորդին: Իսկ ավելի պարզ՝ Նիկոլ Փաշինյանը տասնյակ անմեղ մարդկանց է կալանավորում եւ դատապարտում, որ պահի իր իշխանությունը, որ ինքը, Արմեն Գրիգորյանը եւ մյուս ՔՊ-ականներն օգտվեն իշխանության տված ռեսուրսներից եւ ոչ թե ուրիշ մեկը:

Հիմա գուցե սրանք հասկանան, որ չկա եւ չի կարող լինել խաղաղություն, կա ընդամենը ժամանակավոր հրադադար, եւ կողմերից յուրաքանչյուրը յուրովի է օգտագործում այդ հրադադարի տված հնարավորությունը, մեկը՝ նոր հակամարտությանը պատրաստվելու եւ դրանում հաղթելու, մյուսը՝ հերթական պարտությունն արդարացնելու համար:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՓՈՂԻՆ ՄՈՒՆՆԱԹ...

Ժողովուրդ ջան, մեղքս ինչ թաքցնեմ... Իմանալով, որ ՔՊ-ի նախընտրական ցուցակ ընկնելը դարձել է փողով, բանկից վարկ վերցրի ու գնացի դուզ ՔՊ-ի գրասենյակ: Ինձ կընդգրկե՞ք, հարցրի, փողն էլ բերել եմ, քյաշ: Սրանք, թե՝ այ բարով եք եկել, պարոն Անդրեասյան, համեցեք, նստեք, կոֆե կխմե՞ք: Սիրով՝ ասացի ու տնավարի տեղավորվեցի բազկաթոռի մեջ: Ես ինձ ճիշտ այն միլիոնատիրոջ պես էի զգում, որ մտնում է հյուրանոց, ու լաքեյներն սկսում են չորս կողմը ֆռֆռալ՝ պարոն, տվեք Ձեր ճամպրուկը, օյ, այս ի՞նչ թել է կպել Ձեր վերարկուին, թույլ տվեք վերցնել Ձեր գլխարկը... Կոշիկները հանեք, առավոտյան մենք փայլեցրած կբերենք Ձեր համարը... Դե, դա բնական է: Օրը ցերեկով, 1.5 միլիոնը գրպանումս մտել էի ՔՊ-ի գրասենյակ՝ լավ չզգայի՞ ինձ: Բերին, սեղանը լցրին՝ միրգ, քաղցր, չրեղեն, ֆըստըղ, բուրումնավետ սուրճ... Կարճ փեշով մի աղջիկ, թե՝ պարոն Անդրեասյան, Դուք օգտվեք, մինչեւ մենք թղթերը դասավորենք, բայց գումարը կարող եք հիմա տալ: Խնդրեմ, խնդրեմ, կարող եք չհաշվել, ինձ մոտ՝ ինչպես բանկում: Միայն թե անդորրագիր տվեք... «Այո, իհարկե, դրամարկղի կտրոն էլ կտանք»,- ասաց աղջիկն ու գումարը թռցրեց ձեռքիցս:

Սուրճս էի վայելում, մեկ էլ դռան հետեւում աղմուկ լսվեց: Պարզվեց՝ գրեթե միաժամանակ, նույն հարցով գրասենյակ էին մտել Նիկոլը, Ալենը եւ Ռուբեն Ռուբինյանը: Նախասրահում նրանց խնդրել էին սպասել: Ասել էին՝ ներսում 1.5 միլիոնանոց քաղաքացի կա, նրա հետ վերջացնենք՝ ձեզ էլ կընդունենք: Ո՞նց թե, անակնկալի էր եկել Նիկոլը, մերն առանց հերթի չի՞: Ալենն ու Ռուբինյանն էլ սկսել էին աղմկել, թե՝ մենք ԱԺ-ն թողել ենք անտեր, հասել ենք այստեղ, որ հիմա մեզ ասեք «նյե՞տ»: Բայց մենք ի՞նչ կարող ենք անել՝ արդարացել էր նախասրահի աղջիկը, մարդն արդեն քյաշ փողը տվել է, թղթերն են ձեւակերպում, հո չե՞նք կարող կիսատ թողնել: Սրանց վեճի վրա ես ինձ ավելի միլիոնատեր էի զգում... Երկու «Սկյուռիկ» կոնֆետ ներս գցեցի, վրայից էլ հավեսով մի լավ ֆըռթ արի սուրճս: Քիչ անց կարճափեշ աղջիկը թղթերով մոտեցավ.

- Պարոն Անդրեասյան, այստեղ ստորագրեք, խնդրեմ: Համակարգչի վիճակահանությամբ Դուք մեր ցուցակի առաջին համարն եք, շնորհավորում եմ:

- Ե՞ս, ՔՊ-ի առաջին համա՞ր... Աղջիկ ջան, ձեռ ես առնո՞ւմ, բա Նիկո՞լը:

- Նիկոլն ի՞նչ... Փողին մուննաթ, պարոն Անդրեասյան, ով շատ տվեց, նա էլ առաջինը կլինի: Դուք մեր առաջին 1.5 միլիոնանոց հաճախորդն եք, Նիկոլն ու մյուսները 500 հազար են տալու:

- Ինչո՞ւ, փող չունե՞ն...

- Չէ, կարգն է այդպես, ՔՊ-ականները 500 հազար են մուծվելու: Եթե համակարգիչը նրանց 3-րդ հարյուրյակում էլ տեղ տա, էլի լավ է:

- Փաստորեն, հերթը մեծ է...

- Այո, մտածում ենք 300 հոգու ընդգրկել... Խնդրեմ, սա՝ անդորրագիրը, սա էլ՝ դրամարկղի կտրոնը:

- Վճա՞ր:

- Այո... Ի դեպ, առաջիկայում տիկին Աննա Հակոբյանը նախընտրական ընթրիք է կազմակերպելու, չէի՞ք կամենա մասնակցել: Մուտքը 2.5 միլիոն է, ընթրիքի ժամանակ էլ ինչ-կտաք՝ կտաք: Այն էլ ասեմ, որ դա կմեծացնի Ձեր շանսերը՝ ամրապնդվելու ՔՊ-ի ցուցակի առաջին հնգյակում:

- Շատ բարի, աղջիկ ջան, ես կմտածեմ այդ ուղղությամբ: Տիկին Աննային ասեք, որ ընթրիքին իմ մասնակցությունը պայմանավորված կլինի ռեստորանի «կլասով», թող կարգին ռեստորան վերցնի, ես ամեն ռեստորան չեմ գնում...

- Շատ լավ, պարոն Անդրեասյան, ես կփոխանցեմ: Իսկ հիմա՝ ցտեսություն, դրսում սպասող կա, կներեք...

- Այո, իհարկե, ես ձեզ չեմ խանգարի, միայն թե խնդրում եմ՝ նախասենյակում սպասող այն 3 հոգուն մի բանով զբաղեցրեք, մինչեւ ես դուրս գամ... Ո՛չ երեսներն եմ ուզում տեսնել, ո՛չ էլ, առավել եւս, խոսքի բռնվել...

- Այդ դեպքում մեր շտաբի պետի սենյակով դուրս եկեք:

- Արայիկ Հարությունյանի՞... Աղջիկ ջան, դու ինձ էլի ձեռ ես առնո՞ւմ...

- Քավ լիցի, պարոն Անդրեասյան, Արայիկ Հարությունյանը տեղում չէ, օդը մաքուր է, եկեք, ես Ձեզ կուղեկցեմ...

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄՈԼԴՈՎԱ

ՄԵԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՈՒ ԵԿԵՂԵՑԻ. ՄՈԼԴՈՎԱՅԻ ՕՐԻՆԱ՞ԿՆ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ՈԳԵՇՆՉՈՒՄ

Մոլդովան տարածքով եւ բնակչությամբ Հայաստանին գրեթե հավասար փոքր երկիր է՝ ինքնության մեծ խնդիրներով ու քաղաքական համակրությունների (կամ կողմնորոշման) առումով կիսված հասարակությամբ: 1806-12թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունից Ռուսական կայսրությանն անցած Պրուտի եւ Դնեստրի միջագետքում (կոչվում է Բեսարաբիա) ավելի քան 100 տարի գործել է Ռուս ուղղափառ եկեղեցու (ՌՈՒԵ) Քիշնեւի թեմը:

ենթարկվել է Ռումինիո ուղղափառ եկեղեցու Բեսարաբիայի մետրոպոլիային: Այդ վիճակը պահպանվել է մինչեւ 1944 թվականը, երբ խորհրդային բանակի ուժերով այդ տարածքները «վերամիավորելուց» հետո տեղի ուղղափառ եկեղեցին դուրս եկավ Բեսարաբիայի մետրոպոլության ենթակայությունից եւ մինչ օրս գործում է ցարական, ապա խորհրդային ժամանակներից եկող կարգավիճակում՝ «ՌՈՒԵ ինքնակառավարվող մաս Մոլդովա-քիշնեյան մետրոպոլություն» անվամբ (կրճատ՝ ՄՔՄ):

1991 թվականի անկախացումից անմիջապես հետո Մոլդովայի ուղղափառ համայնքը երկփեղկվեց, քանի որ 10 տարվա պայքարից հետո, ի կատարումն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշման, 2002 թվականին պաշտոնապես գրանցվեց «Բեսարաբիայի մետրոպոլություն» անվամբ (կրճատ՝ ԲՄ) եկեղեցի (գործում է Ռումինիո ուղղափառ եկեղեցու կազմում):

Արձանագրենք, կիրառելով հայկական եզրաբանությունը, ներկայում Մոլդովայում գործում է երկու ուղղափառ եկեղեցի՝ «ռուսապատկան» եւ «ռումինապատկան»: Առաջինն ունի մոտ 1200, երկրորդը՝ մոտ 180 եկեղեցի: ՄՔՄ-ն կրում է «անտառային ուղղափառության» հիշողությունը՝ գեղջկական պատումներով, խորհրդային մղձավանջը քրիստոնեաբար հաղթահարելու ջանքերով: ԲՄ-ն հատկանշվում է իր «էլիտար» արմատներով, այն ձեւավորվել է մի միջավայրում, որտեղ եկեղեցին եւ աղոթատեղի է, եւ դպրոց, գիր, գրական լեզու, ինքնուրույն եւ թարգմանական մատյաններ ստեղծելու ավանդություն, լատիներեն բնագրերի կարգապահություն: ԲՄ-ն հավատի կենտրոն է, այստեղ խաչը դարձել է գրիչ, աղոթքը՝ լեզու, լեզուն՝ վերջին դերձանը, որով ժողովուրդը պահպանում է կորստյան եզրին կանգնած իր ինքնությունը:

ՄԻԵԴ-Ի ԵԶԱԿԻ ՎՃԻՌԸ

1992-ին ԲՄ-ի փաստացի վերականգնմամբ հրապարակ բերվեցին ազգային հիշողության իրավահաջորդի, մոլդովական լեզվի կարգավիճակի հարցերը: ՄԻԵԴ-ի 2001-ի որոշմամբ Մոլդովայի կառավարությանը պարտադրվեց գրանցել ԲՄ-ն, նրան վերադարձնել եկեղեցիների եւ վանքերի մի մասը կամ փոխհատուցում տալ (ներկայում մոտ 240 վանքի, եկեղեցու, պաշտամունքային շենք-շինության, հողակտորի, գերեզմանատան պատկանելությունը մնում է վիճարկման առարկա): ՄԻԵԴ-ի որոշումը ելնում էր այն հայեցակարգից, որ «Ո՞ր եկեղեցին է ճշմարիտ իրավահաջորդը» բանավեճը պետական գործառույթ չէ, դրա պատասխանը պետք է տան իրենք՝ հավատացյալները: Փաստորեն, Եվրոպայում առաջին անգամ դատական որոշմամբ արձանագրվեց, որ հիշողություն կրողը ոչ թե պետությունն է, այլ՝ Եկեղեցին:

50% ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿԻՐԸ՝ 2 ՍԵՊԻ ԵՎ 3 ՎԵԿՏՈՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ

ՄՔՄ-ի հետեւորդները համարվում են ռուսամետ, ԲՄ-ի հետեւորդները՝ արեւմտամետ (ռումինական, հետեւաբար՝ եվրոպական կողմնորոշմանը հակված): Քաղաքական առումով խիստ ընդգծված են Տրանսնիստրուի (Մերձդնեստրի) եւ Գագաուզիայի բնակիչների կոնֆեսիոնալ համակրությունները: Տրանսնիստրուի տարածաշրջանում խոսույթն աներկբա է՝ «Մենք ՄՔՄ-ի հետ ենք եւ ռուս (ռուսալեզու) ենք»:

Գագաուզիան, իր փոքրաթիվ բնակչությամբ, հանդես է գալիս որպես ինքնուրույն կրոնական-մշակութային տարածք: Գագաուզիան թեեւ պաշտոնապես պատկանում է ԲՄ-ին, բայց նրա կրոնական-լեզվական կյանքը չի տարրալուծվում ԲՄ-ի հոգեւոր-մշակութային միջավայրի մեջ: Պատճառը գագաուզներին բնորոշ առանձնահատուկ լեզվամշակութային միջավայրն է, հոգեւոր կուռ ավանդույթները, համայնքային ինքնավարության զգացումը: Գագաուզի համար խաչը նաեւ դրոշ է եւ ինքնության խորամատ:

Քաղաքական առումով արդի Մոլդովայում մրցակցում են երեք կենտրոններ՝ Բրյուսել, Բուխարեստ, Մոսկվա: Բրյուսելը Մոլդովայի ոչ միայն ապագան, այլեւ հենց ներկան տեսնում է պետության արդիականացման մեջ եւ օգնում է դատական համակարգի, էներգետիկ անվտանգության, կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառներում ինստիտուցիոնալ բարեփոխումների շարունակմանը, ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը: 2022 թվականին Մոլդովան ստացավ ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակ, Բուխարեստը, օգտագործելով իր պատմական ու լեզվական կապերը, հանդես է գալիս ռումինական մշակութային ինքնության հովանավորի եւ գիրը լատինականացնելու «փափուկ» դիրքերից, սակայն դա չի խանգարում նրան՝ իրականացնելու նախահարձակ մի ուղեգիծ, որի արդյունքում երկրի գրեթե 2.3 մլն չափահաս բնակչության կեսը վերջին 15 տարում ստացել է Ռումինիայի, դրանով իսկ՝ ԵՄ քաղաքացիություն:

Մոսկվան պաշտպանում է ուղղափառ հոգեւոր ժառանգության շարունակման գիծը, որտեղ Եկեղեցին մշակութային եւ հոգեւոր կապի կրիչն է. Մոսկվայի կարգախոսն է՝ «Մենք միշտ եղել ենք միասին»: Քաղաքացիություն շռայլելու հարցում Ռուսաստանն էլ է հասել շոշափելի «հաջողության»: Տրանսնիստրուի մոտ 450 հազար եւ Գագաուզիայի մոտ 130 հազար բնակչության կեսն ունի ՌԴ անձնագիր: Տնտեսական բնագավառում Ռուսաստանի հետ Մոլդովայի շաղկապվածության գլխավոր ուղղությունը էներգետիկան է: Զգալի թիվ են կազմում Իտալիայից, Ռուսաստանից, Ռումինիայից ու այլ երկրներից դրամական փոխանցումները (2023 թվականին՝ 1.60 մլրդ USD, 2024 թվականին՝ 1.90 USD): Մոտավոր գնահատումներով՝ արտասահմանում ապրում է 1.0-1.2 մլն մոլդովացի: ՌԴ-ն դեռ մնում է Մոլդովայի տնտեսական կարեւոր գործընկերը, աշխատուժի միգրացիայի կենտրոնը, սակայն վերջին տարիներին այդ ազդեցությունը նվազման միտում ունի, Մոլդովան ավելացնում է համագործակցության ծավալները Ռումինիայի եւ ԵՄ մյուս երկրների հետ՝ ենթակառուցվածքների, էներգետիկայի, առեւտրի բնագավառներում: Այս երեք վեկտորները՝ Բրյուսել, Բուխարեստ, Մոսկվա, ձեւավորվել են «երկակի ինքնությամբ» սերունդ եւ ներքաղաքական գործընթացների մեջ են ներքաշել ուղղափառ եկեղեցին:

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ

Մոլդովայի քաղաքական կյանքում ուղղափառ եկեղեցու դերը պարզորոշ երեւում է հատկապես վերջին 10-15 տարիներին անցկացված համապետական ընտրությունների համապատկերում, ուստի ընդհանուր գծերով դիտարկենք խորհրդարանական (2009 - 2 անգամ, 2010, 2014, 2019, 2021, 2025 թթ.) ու նախագահական (2016, 2020, 2024 թթ.) ընտրությունները եւ ուղղափառ երկու եկեղեցիների «ընտրական ակտիվությունը»:

2009 թվականի ապրիլի հերթական խորհրդարանական ընտրություններում հաղթողը Կոմկուսն էր՝ Վլադիմիր Վորոնինի առաջնորդությամբ: Սակայն խորհրդարանը չկարողացավ ընտրել նախագահ, քանի որ փոքրամասնությանը հաջողվեց արգելափակել իշխանության թեկնածուի ընտրությունը: Ազատականների (Միխայ Գիմպու), Ազատ ժողովրդավարների (Վլադիմիր Ֆիլատ), Ժողովրդավարների (Մարին Լուպու) ստեղծած ընդդիմադիր դաշինքը («Այլանս հանուն եվրահնտեգրման»՝ ԱՀԵ) բողոքի փողոցային ճնշումների միջոցով սրեց քաղաքական ճգնաժամը: Իշխանությունը հարկադրված էր նահանջել: Նույն տարվա հուլիսին անցկացված նոր ընտրություններում Կոմկուսը պարտվեց: ԱՀԵ-ն խորհրդարանում ստացավ հարաբերական մեծամասնություն եւ կազմեց կառավարություն:

Ռուսամետ ՄՔՄ-ի բարձրագույն հոգեւորականությունը հանդես եկավ երկխոսության, խաղաղ հանգուցալուծման կոչերով, որոնք փաստացի համընկնում էին իշխանության շահերին: Իսկ ռումինամետ ԲՄ-ն՝ իր փոքրաթիվ հետեւորդներով, բացահայտ աջակցություն ցուցաբերեց եվրոպամետ թեւին: Այս շրջանում ՄՔՄ-ն դեռ ամբողջությամբ նույնացվում էր խորհրդային ժամանակներից եկող պահպանողականության հետ եւ ակնհայտ համակրում էր կոմունիստներին: Նախընտրական քարոզչության ժամանակ ՄՔՄ-ի մի շարք քահանաներ հորդոր էին կարդում՝ «չմերժել իշխանությունը, որ պահպանել է կայունությունը»: Իսկ նոր իշխանության եվրոպամետ ուղեգծին ՄՔՄ-ն արձագանքեց զգուշավոր թերահավատությամբ: Սկսվեց եվրոպամետ իշխանություն-ՄՔՄ երկարատեւ դիմակայությունը: Երկու եկեղեցին էլ չմնացին չեզոք եւ մտան իշխանության համար պայքարի հորձանուտ:

2010 թվականի նոյեմբերին անցկացվեցին խորհրդարանի արտահերթ ընտրություններ, քանի որ նախորդ խորհրդարանն էլ չկարողացավ ընտրել նախագահ: Պատճառն այն էր, որ ԱՀԵ-ն չուներ կայուն բացարձակ մեծամասնություն: Այս անգամ էլ հաղթեց ԱՀԵ-ն եւ դարձյալ չկարողացավ ընտրել երկրի նախագահ՝ դրա համար անհրաժեշտ 61 ձայն չունենալու ու նույն պատճառով: Կառավարություն, իհարկե, ձեւավորվեց, սակայն էապես արժեզրկվեց խորհրդարանի կողմից երկրի նախագահ ընտրելու սահմանադրական նորմը:

2010 թվականը կրկին ի հայտ բերեց, որ Եկեղեցին քաղաքական ինստիտուցիա լինելու ներուժ չունի, սակայն ազդեցության արդյունավետ գործիքներ ունի գյուղական համայնքներում եւ ինտելեկտուալ բանավեճերում, որոնց ընթացքում բարձրաստիճան շատ հոգեւորականներ բացահայտ քարոզեցին ընդդեմ արեւմտյան արժեքների, եւ միայն իրենց հայտնի պատճառով հատկապես երկրի նախագահ ընտրելու կարգի շուրջ վեճերը Եկեղեցին դարձրեց իր համար բարոյական կռվի դաշտ:

Շարունակելի

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

Ֆանտաստիկ պատմություններ - 2025

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ ԵՎ ԱՄԵՆԱՏԵՍ ԱՉՔԸ

Նթվականին, երբ Հայաստանում ծնունդ առած «Սրբազան արժեքների միաբանություն» ուխտի գործունեության շնորհիվ մարդկությունը հասել էր քաղաքակրթական այնպիսի աստիճանի, որ աշխարհում վաղուց հաստատվել էին համատիեզերական ներդաշնակություն եւ արդարություն, որոնց շնորհիվ էլ ամենուր տիրում էր սիրո թագավորություն, նույն Հայաստանում տեղի ունեցան հնագիտական զարմանալի հայտնագործություններ, որոնք կասկածի տակ դրեցին նույնիսկ հնագույն ժամանակներին վերաբերող եւ անառարկելի թվացող մի շարք ճշմարտությունների իսկությունը:

Նշված N թվականին հնագիտական տեխնոլոգիաներն այնքան էին զարգացել, որ հետազոտությունները վաղուց արդեն կատարվում էին հողի խորքերը թափանցող հատուկ ճառագայթներ արձակող սարքի միջոցով: Սարքը կոչվում էր Ամենատես աչք, ուներ զուտ կենսաբանական ծագում, ստեղծվել էր հիշողության բջիջներից, որոնք էլ արձակում էին հնագիտական կամ պեղումային կոչվող ճառագայթները, որոնք ժամանակի ընթացքում սկսեցին անվանվել սարքի անունով եւ ի վերջո նույնպես սկսեցին կոչվել Ամենատես աչք: Ընթացքում այդ անունը տարածվեց նաեւ պեղումների նորահայտ մեթոդի վրա, եւ ստացվեց այնպես, որ Ամենատես աչք սկսեցին կոչել թե՛ սարքը, թե՛ ճառագայթները, թե՛ մեթոդը: Պեղումների նախկին մեթոդն անցավ մոռացության գիրկը եւ ներողամիտ ժպիտ էր առաջացնում ժամանակի հնագետների մոտ, որոնք Ամենատես աչքի միջոցով կարողանում էին հասնել հողի ամենաանհասանելի թվացող խորքերն ու ասես սեփական աչքով տեսնել այն ամենը, ինչ ժամանակները պահ էին տվել այնտեղ, վերականգնել պատմության պատկերը, հստակ ճշտել ոչ միայն գտածոների ժամանակաշրջանը, այլեւ վեր հանել մարդկանց կյանքի ու գործունեության մանրամասները, պարզել նույնիսկ մահվան պատճառներն ու հանգամանքները, կատարել ուղղակի անհավանական թվացող այլեւայլ ու բազում հայտնագործություններ:

Սակայն Ամենատես աչքի, թերեւս, ամենաֆանտաստիկ հատկությունը ժամանակաշրջանի հիշողությունը վերականգնելու եւ այդ միջոցով էլ տվյալ ժամանակաշրջանի կենսամթնոլորտը բացահայտելու կարողությունն էր: Դա հնարավորություն էր տալիս բացահայտելու, թե քաղաքակրթական ինչ գաղափարներ են իշխել հնագիտական տվյալ շերտը ստեղծած ժամանակաշրջանում, ինչպիսին են եղել հասարակական ու միջանձնային հարաբերությունները, հոգեբանական ինչ տրամադրություններ ու ազդակներ են գործել, բարոյահոգեբանական ու գաղափարական ինչ պատկերացումներ են իշխել, քաղաքական ինչ հոսանքներ են եղել, կենսագոյության ինչ արժեքներ են տիրել եւ այլն, եւ այլն:

Ահա, այս Ամենատես աչքի շնորհիվ էր, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվեցին զանգվածային թաղումների գերեզմանոցներ, որոնք, ըստ նույն Ամենատես աչքի եզրակացության, առաջացել էին զանգվածային ինքնասպանությունների հետեւանքով:

Այս հայտնագործությունը մեծ տարակուսանք առաջացրեց եւ բուռն քննարկումների ու բանավեճերի պատճառ դարձավ ոչ միայն գիտական աշխարհում, այլեւ հասարակության լայն շրջանակների մեջ:

Բանն այն է, որ Հայաստանում հայտնաբերված այս թաղումները վերաբերում էին 21-րդ դարի առաջին կեսերին պատկանող շերտին, որի մասին սպառիչ համարվող տեղեկություններ էին պահպանվել նախորդ քաղաքակրթության էլեկտրոնային արձանագրություններում, որոնց համաձայն՝ զանգվածային ինքնասպանությունները, այն էլ՝ ծիսական հիմքով, բնավ բնորոշ չէին այդ քաղաքակրթությանը, մանավանդ որ չհայտնաբերվեց այն առաջնորդի գերեզմանը, որի հետեւից ինքնասպանական զոհաբերություններ պիտի կատարված լինեին:

Բայց Ամենատես աչքի հետազոտությունները հստակ մատնանշում էին, որ գերեզմանատեղիներում հայտնաբերված մարդկային մնացորդների մահվան պատճառը հենց ինքնասպանությունն է: Ընդ որում, ճառագայթները հստակ հուշում էին, որ այդ քայլին դիմած անձինք թեեւ սովորաբար ունեցել են հասարակական զգալի դիրք, սակայն եղել են մի տեսակ բարձրաստիճան ստրուկներ, խամաճիկ ու կամակատար, պաշտոնյա, կամ նյութական արժեքները վեր են դասել ամեն ինչից, կամ կուրորեն հետեւել են ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի, որը նրանց հանգեցրել է այդ վախճանին:

Սակայն այստեղ թերեւս ամենակարեւորը մարդկային մնացորդներում պահպանված հոգեբանական մթնոլորտի վերծանումն էր: Այն ցույց էր տալիս, որ ինքնասպանությունները կատարվել են անխուսափելի պատասխանատվության վախից: Մի խոսքով, ստեղծվեց զանգվածային ինքնասպանությունների գաղտնիքը քննող հանձնախումբ, որը, ի մի բերելով Ամենատես աչքի հայտնաբերած փաստերը, դրանք համադրելով տիրած մթնոլորտի հետ ու վերլուծելով, վերականգնելով ժամանակի պատկերը, հանգեց այսպիսի եզրակացության.

«Եղել է ժամանակաշրջան, երբ Հայաստանում իշխել է մի սուտ մարգարե, գուցե իրականում յուրատեսակ չար հանճար, որը, ժողովրդական բնորոշմամբ՝ դրսում քահանա է եղել, ներսում՝ սատանա, որն արտաքին աշխարհում իր մասին ձեւավորել է ժողովրդավարի ու խաղաղարարի համարում, բայց ներսի համար այդ ամենն իրականում եղել է սոսկ տրոյական ձի, ինքն իրականում եղել է բռնակալ ու մարդատյաց, ոտնահարել է անձնային, ազգային ու համամարդկային բոլոր սրբազան արժեքները, նույնիսկ ակնհայտ հանցանք գործել մարդկության դեմ (օրինակ՝ ցեղասպանության ուրացումը), ստեղծել է քաոս, երկիրը մատնել աղետի, պատճառել բազում թանկ կորուստներ, պառակտել հասարակությունը, սիրո խոսքեր շաղ տալով՝ իրականում տարածել ու առաջացրել է չարության, թշնամանքի, ատելության ու մաղձի թունավոր մթնոլորտ, հումանիզմի իսպառ բացակայություն ներարկել գործերին ու մտածողությանը, հոգիներին ու մտքերին, լեզվամտածողությունից ջնջել «բարություն» եւ «գթասրտություն» բառերը, իսկ հիշողություններից՝ նույնիսկ լեռը, ձգտել է տարածել համընդհանուր մանկուրտացում, ժողովրդավարության քողի տակ հաստատել է բացարձակ մենիշխանություն, բանտերը լցրել իր հակառակորդներով, այն է՝ այլ՝ սրբազան արժեքներ դավանողներով, անարժան եկեղեցականների դեմ պայքարի քողի տակ փորձել կործանել հենց Եկեղեցին, հավատն ինքնին: Նրա օրոք ժողովուրդն այնքան էր փոխվել, որ նույնիսկ ինքն իրեն չէր ճանաչում, եւ այնքան էր հոգնել նրանից, որ շատերը նույնիսկ չէին կարողանում լսել նրա ձայնը, տեսնել պատկերը, հետեւել խոսքին: Շատերն անգամ նրա անունը չէին ուզում լսել ու տալ, իսկ ստիպվածության դեպքում նրան հիշատակում էին միֆական չարքերի «Ոմն» մականունով: Այս Ոմնը...»...

Այնուհետեւ հետեւում էր պատմության դասագրքերից ու բազում այլ վկայություններից հայտնի նկարագրությունը այդ ժամանակների Հայաստանի, որը քաջ հայտնի է բոլորին, վավերագրված է արձանագրման բոլոր միջոցներով ու աղբյուրներում, այնպես որ, այդ ամենը ներկայացնելու կարիք չկա բնավ: Ուստի անդրադառնանք եզրակացության մեզ հետաքրքրող այն հատվածին, որը վերաբերում է զանգվածային ինքնասպանություններին ու թաղումներին.

«Ամենազարմանալին ու ահավորը, սակայն, այս սուտ մարգարեին ֆանատիկորեն հետեւող մարդկանց վարքն էր ու ճակատագիրը, ինչն այլ կերպ կարելի է կոչել հանցակցություն եւ հետեւանք: Այս մարդիկ գուցե ավելի մեղավոր էին տեղի ունեցածների մեջ, քան Ոմնը՝ ինքը: Սրանց ստրկական կախվածությունը նրա ուժի հիմնական աղբյուրն էր, իսկ սրանք, թեեւ բազմաթիվ փոխակերպումների միջով անցնելով հետզհետե վերածվել էին փոխակերպուկների, բայց ժամանակի ընթացքում գուցե արդեն գիտակցել էին իրենց այդ ընթացքի ահավորությունը, որովհետեւ հանցակցությունը գուցե ավելի մեծ մեղք է, քան հանցանքն ինքնին: Սակայն գաղտնիք չէ, որ հանցակցությունն ունի նաեւ միավորող չար զորություն: Ահա, այս ամենի հետեւանքով էլ սրանք շարունակում էին հետեւել նրան, կատարել նրա ամենամթին ցանկությունները, ասես կամավոր կամ, որ ավելի ճիշտ է, իրենք իրենց կամազուրկ տանելով դեպի վիհ, դեպի կործանում, մինչեւ եկավ մի պահ, երբ, հակազդեցության բնական օրենքին համապատասխան, սուտ մարգարեի սեւ ուժերի դեմ ելան սրբազան արժեքների սպիտակ զորագնդերը, մերկացրին նրա կեղծ գաղափարները եւ հալածեցին նրան, իսկ նա չքվեց ու անհետացավ, ասես չէր էլ եղել, գուցե փախուստի դիմեց իրեն սնուցող այլ ուժերի ճամբար, գուցե՝ դեպի օտար երկրներ: Եվ նրա՝ լքված ու դավաճանված հետեւորդների բազմությանը տիրեց տագնապ ու վախ, եւ քանի որ իրենք էլ դարձել ու եղել էին չարության ու պատժի գործիք, հավատարմագրվել էին այդ մեթոդին, այն դարձրել գործելակերպ ու կենսակերպ, ուստի մտածեցին, որ իրենց հանդեպ էլ գործելու է ակն ընդ ական հինավուրց օրենքը, կամ, որ ավելի հավանական էր, «ինչ որ ցանես, այն կհնձես» բնական օրենքը կամ էլ վենդետայի սկզբունքը եւ կամ էլ պարզապես չոր օրենքը, եւ իրենք էլ ենթարկվելու են նույն անողոք ու անգութ վերաբերմունքին, ինչն իրենք են դավանել ու իրականացրել. պատիժ, որը չունի ներում: Ահա, այդ ամենից ու պատասխանատվության, հատուցման եւ պատժի անխուսափելիության գիտակցումից արյուն սառեցնող եւ մտքի ու հոգու աչքը կուրացնող վախից էլ ծնվել է խուճապ, նաեւ՝ անկատար զղջում ու անհույս ինքնաձաղկում, անելանելիության տենդագին համակվածություն, հիստերիա եւ նմանատիպ այլ զգացումներ ու մտքեր, որոնց պատճառով էլ շատերը դիմել են ինքնասպանությամբ պատժից ազատվելու կամ մեղքերը քավելու անհավատալի թվացող քայլին...»...

ՀԳ. *Ամենատես աչքը, ահա, այսպիսի բացատրություն էր տվել առեղծվածային զանգվածային թաղումներին: Իհարկե, այդ բացատրությունը մեր ժամանակներում անհավանական է թվում, սակայն մենք նրան չհավատալու պատճառ կամ պատճառներ չունենք: Այսուամենայնիվ, այս պատմությունն ավարտելուց առաջ հարկ ենք համարում մի փոքրիկ լրացում անել. մենք մոռացանք ասել, որ Ամենատես աչքի գուցե ամենաֆանտաստիկ հատկություններից մեկն այն էր, որ նա կարողանում էր անցյալի մեջ տեսնել տարբեր՝ հնարավոր ապագաներ, որոնք կարող էին իրականանալ կամ չիրականանալ՝ կախված հանգամանքներից, նախախնամությունից, մարդկային կամքից ու գործունեությունից եւ այլ բաներից: Ապագան երբեք միանշանակ կանխորոշված չէ, կարող է լինել բոլորովին այլ, քան ինչ կա, կամ բոլորովին այլ, քան ինչ կարող էր լինել:*

Ահա, ուրեմն, մենք նկարագրեցինք Ամենատես աչքի պատկերած հնարավոր ապագաներից մեկը, որը, սակայն, ըստ հենց այդ աչքի այլ վկայությունների, չէր իրականացել, այլ իրականացել էր բոլորովին այլ ապագա, որի հիմնական արարիչներն էին սուտ մարգարեին հաղթած սրբազան արժեքների սերմանած զղջումը, ապաշխարանքը, քավությունն ու ներումը (թեեւ ո՞վ գիտի, եթե սրբազան արժեքների փոխարեն հաղթեին այլ արժեքներ, գուցե իրականանար հենց այդ՝ զանգվածային ինքնասպանությունների ու թաղումների հանգեցրած ապագան), բայց սա արդեն այլ պատմություն է, որին գուցե անդրադառնանք մեկ այլ անգամ:

Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հարցազրույց «Իսրայելահայեր» թերթի գլխավոր խմբագիր, իսրայելահայ հասարակական գործիչ ***Արտյոմ Չերնամորյանի*** *հետ*

- Օրերս Հայաստան էին այցելել միջազգային լրագրողներ (Le mond, El Pais, Financial times, EU observer եւ այլն) ու բավական ազդեցիկ այլ փորձագետներ: Նպատակը պարզ է՝ հանրային դիվանագիտության միջոցով հասնել նրան, որ այդ մարդիկ առաջին «շուրթերից» լսեն ճշմարտությունը՝ ՀՀ-ին սպառնացող անվտանգային խնդիրների, էթնիկ զտման ու արցախահայերի բռնի տեղահանման, պատերազմական հանցագործությունների եւ այլնի մասին: Այս դաշտում ինչ ունենք:

- Ցավոք սրտի, Ադրբեջանը դիվանագիտական հարաբերությունների ամրապնդումից հետո ստեղծել էր Իսրայելում «ԱԶԻԶ» Ադրբեջան-Իսրայել միջազգային ասոցիացիան, որը սնվում է Բաքվում գործող Հեյդար Ալիեւի միջազգային ֆոնդից, որը մոտ 15 տարի է, ինչ գործում է Իսրայելում: Այս հիմնադրամն ամեն տարի տասնյակ հայտնի հրեա լրագրողների հրավիրում է իր հաշվին Բաքու, «սեւ խավիարով», թանկ հյուրանոցներով պատիվ տալիս ու հակահայկական տրամադրություններ սրսկելով՝ հետ է ճանապարհում, թե վճարում է նրանց, չգիտեմ, չեմ կարող ասել: Այս ֆոնդը «Խոջալուի ցեղասպանության» հուշարձան էր դրել Իսրայելի նախագահ Վայցմանի անվան այգում: Այս կազմակերպության հիմնադիր կազմում շրջանառվում էին Իսրայելի Կնեսետի պատգամավորներ Ավիգդոր Լիբերմանի, Ռոբերտ Իլատովի եւ Սոֆյա Լանդվեռի անունները: Վերջինս բանտարկվեց փողերի լվացման եւ կաշառակերության համար: Մեր պարագայում ավելի քան 22 տարի փորձում եմ կազմակերպել հրեա լրագրողների այց Հայաստան, բայց չկա մեկը ո՛չ Իսրայելում, ո՛չ էլ Հայաստանում, որ գիտակցի ծրագրի կարեւորությունը:

- Այսինքն՝ «խավիարային դիվանագիտությունն» ավելի զորե՞ղ է «հանրային դիվանագիտությունից»:

- Ցավոք սրտի, ՀՀ ոչ մի կառավարություն՝ ո՛չ նախկին եւ ո՛չ էլ ներկայիս, շահագրգիռ չեն՝ լրջորեն զարգացնել հայ-հրեական հարաբերությունները: Մինչեւ հեղափոխությունը ստեղծվել էր Հայաստան-Իսրայել միջազգային ֆորում, եղան Ազգային ժողովի ու Կնեսետի մակարդակով փոխայցելություններ, գործարարների շփումներ, բայց Հայաստանը դեսպանատուն չուներ: Նոր կառավարությունը բացեց, բայց 44-օրյայի ժամանակ դեսպանին հետ կանչեցին, հետո փոխեցին, բայց, ըստ էության, ոչ մի լուրջ տեղաշարժ ու աշխատանք չի տարվում, ոչ մի խորհրդարանական շփումներ չկան, էլ ուր մնաց լրագրողներ հրավիրելու ու նրանց Հայաստանը ցույց տալու հարցը:

- Հնարավո՞ր է, որ Ադրբեջանի հետ ռազմավարական դաշնակից Իսրայելը ներկայացնող լրագրողներն ու փորձագետներն «ազդվեն» Հայաստանում տեսածից եւ փոխեն ադրբեջանամետ կողմնորոշումը:

- Չեմ կարծում, որ արժե նույն լրագրողներին, որոնք Ադրբեջան են այցելել, բերել Հայաստան. նախ՝ Բաքվի հետ մրցել չենք կարող, «գրպանները փող դնել» չենք կարող: Ես կարծում եմ, որ Հայաստանը ժողովրդավարական երկիր է, բայց փոխարենը կարող ենք Իսրայելի կառավարությանը դեմ ու ընդդիմադիր շատ հայտնի լրագրողների հրավիրել Հայաստան, այլ ոչ «Բիբիստ եւ ազերապաշտ» լրագրողների, ու ազդելու համար էլ ջանքեր պետք չեն: Պետք է ցույց տալ նրանց ոչ թե 5 աստղանի հյուրանոցներ ու պորտապարուհիներ, այլ՝ Եղեգիսի հրեական գերեզմանատունը, որը, ցավոք, անմխիթար վիճակում է, ու լավ կլինի, որ Եղեգիս տանող ճանապարհից բացի, որպես բարի կամքի դրսեւորում, մի քանի «դոլար» տան՝ մաքրեն գերեզմանատունն աղբից ու ներկեն 20 տարի առաջ ներկված փոքրիկ դարպասը: Հետո ծանոթացնել հրեաներին Մատենադարանի հրեական ժառանգության հետ, վստահ եմ՝ «սեւ խավիարից» ավելի տպավորված կլինեն հրեա մտավորականներն ու լրագրողները:

- Հակամարտող եւ այդ հակամարտությունը կարգավորել ջանացող երկու երկրների միջեւ տեղեկատվական-հանրային «դիմակայությունն» է ավելի շուտ հարթվում, թե՞ պետական մակարդակով առկա «վիճահարույց իրավիճակը»: Հայաստանում եւ Ադրբեջանում այս «պայքարը», կարծես, զուգահեռ է:

- Ես չեմ կարող համեմատել «խաղաղության» գնացող 2 երկրի՝ Ձեր նշած տարբեր դիմակայությունները: Ադրբեջանի կառավարությունը տասնամյակներով հային ներկայացնում է որպես ոխերիմ թշնամի՝ մանկապարտեզից սկսած, ի դեպ, նույնն անում է ՀԱՄԱՍ-ը հրեաների դեմ, Իրանն էլ՝ կրկին հրեա ժողովրդի դեմ, ու այս ամբողջը՝ պետական մակարդակով: Ադրբեջանում տեղեկատվական-հանրայինն ու պետականը նույնն էին, այնինչ Հայաստանում հյուսիսային երկրի՝ իբր դաշնակից ու մեզ «ոտքով-գլխով ծալած» երկիրը շատ լուրջ լրատվական հնարավորություններ ու մեր երկրի քաղաքականության վրա լուրջ ազդելու լծակներ դեռ ունի: Իսկ մեր իշխանություններն ավելի զուսպ են ու, ցավոք սրտի, միշտ էլ, իմ կարծիքով, ըստ էության, խստորեն չեն հակադարձում ադրբեջանական բոլոր տեսակի ապատեղեկատվությանը: Ալիեւը միշտ շարունակելու է զինել իր բանակը գերժամանակակից զինատեսակներով, իսկ Հայաստանը բանակի ծառայության ժամկետն ու բանակային բյուջեն է կրճատում: Կոչ եմ անում՝ քիչ զբաղվել «տերտեր շոուներով». հոգեւոր դասի վեթինգը 2018-ին պետք է լիներ, այլ ոչ հիմա, ողջ բարեփոխումներն արդեն արված պետք է լինեին, 7 տարի ոչինչ չարվեց, երկիրը դավաճաններից չմաքրվեց, ու հիմա դեմագոգիայով են զբաղված:

ՔԻՉ ԶԲԱՂՎԵՔ «ՏԵՐՏԵՐ ՇՈՒՆԵՐՈՎ». ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻ ՎԵԹԻՆԳԸ 2018-ԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՐ

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն

Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 6.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՐԿՐԻ ԳՈՐԾԸ ՈՉ ԹԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԸՆՏՐԵԼՆ Է, ԱՅԼ՝ ԻՇԽԱՆԱՑՐԿԵԼԸ

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Անշուշտ, Նիկոլն ու իր խմբակն այս ընտրություններում եւս կփորձեն արհեստական օրակարգերով ժողովրդին շեղել ու մոլորեցնել: Բայց մենք վստահ ենք, որ նրանք ինչքան էլ փորձեն, միեւնույն է, այս անգամ արդեն չեն հաջողելու:

Չեն հաջողելու, որովհետեւ այս ժողովուրդն այլեւս հասկացել է, որ իր խնդիրն այսօր ոչ թե Նիկոլի ասած խաղաղության եւ Նիկոլի ասած պատերազմի, այլ այդ երկուսի ու իսկական խաղաղության միջեւ ընտրություն անելն է: Ավելին, նա՝ այս ժողովուրդը, հասկացել է նաեւ, որ գալիք հերթական թե արտահերթ ընտրություններում իր խնդիրը ոչ թե նիկոլավարի խաղաղության ու նիկոլավարի պատերազմի միջեւ ընտրելն է լինելու, այլ այդ երկուսը մերժելն ու իր քվեն հանուն իսկական խաղաղության տալը:

Այս առումով, որքան Ալիեւն ու իր կառավարությունը, այնքան էլ Նիկոլն ու իր խմբակը պետք է վստահ լինեն, որ Սեւանա լիճը երբեք Գյոյչա չի դառնա: Ու չի դառնա ոչ թե այն պատճառով, որ ռուս-պարսկական պայմանագրերում Սեւանա լիճը Սեւանա լիճ է եղել, այլ չի դառնա, որովհետեւ այն անհիշելի ժամանակներից հայ ժողովրդի բնօրրանն է, իսկ այսօր արդեն՝ Հայաստանի Հանրապետության կենսատարածքը: Եվ ինչպես դարեր շարունակ, այնպես էլ այսօր հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետությունն իրենց ողջ ներուժն ու կարողությունները կծախսեն, բայց թույլ չեն տա, որ Սեւանա լիճը Գյոյչա դառնա:

Եվս մի հանգամանք, որի կարեւորումն այսօրվա պայմաններում ուղղակի անհրաժեշտություն է: Հարցն այն է, որ Նիկոլն ու իր խմբակն այդպես էլ չեն կարողանում գիտակցել, որ հայ ժողովուրդն արդեն վաղուց հասկացել է, որ իր խնդիրն այսօր ո՛չ Ադրբեջանն է եւ ո՛չ էլ Թուրքիան: Դրանք ինչպես իր թշնամին եղել են, այնպես էլ մնում են եւ մնալու են:

Հասկացել է նաեւ, որ իր խնդիրն այսօր ո՛չ Արեւմուտքն է եւ ո՛չ էլ Ռուսաստանը: Դրանք՝ իրենց շահերով, միշտ էլ այս տարածաշրջանում եղել են, եւ ինքը՝ թե՛ որպես ժողովուրդ եւ թե՛ որպես պետություն, միշտ էլ կարողացել է նրանց շահերի միջեւ իր բալանսավորված քաղաքականության համար տեղ գտնել:

Նրանք՝ Նիկոլն ու իր խմբակը, անգամ չեն հասկանում, որ հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետության քաղաքացին արդեն գիտեն ու իրենց համար հստակեցրել են այն, որ գալիք հերթական թե արտահերթ ընտրություններում իրենց գործը ոչ միայն նիկոլավարի պատերազմի եւ նիկոլավարի խաղաղության միջեւ ընտրելը չէ, այլ նաեւ Հայ առաքելական եկեղեցու եւ նիկոլական կառավարության միջեւ չընտրելն է:

Նրանք, ի վերջո, պիտի հասկանան, որ հայ ժողովուրդն այսօր գիտի ու վստահ է, որ իր այսօրվա գործը ոչ թե Եկեղեցուց ու նիկոլական կառավարությունից մեկին ընտրելն է համարում, այլ ուղղակի Նիկոլին ու իր կառավարությանն իշխանությունից հեռացնելը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am